IslamLand

# ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

طريق السعادة باللغة الأرمينية


Հեղինակ

*Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա*

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيحة


Թարգմանությունը

المركز الأوروبي للدراسات الإسلامية

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

*& Աննա Ռ. Հակոբ*

IslamLand

# ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

*Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա*

*Թարգմանությունը*

**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)**

**& *Աննա Ռ. Հակոբ***

Ստուգող համձնաժողով:

*Աբու Առամ*

*© Գրքի բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին*

*Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա*

Հեղինակը թույլատրում է վերատպել կամ կրկին հրատարակել գիրքը, եթե որպես նպատակ ծառայում է գրքի անվճար տարածումը, որի ընթացքում արգելվում է կատարել փոփոխություններ:

Վերոնշյալ կանոնները պահպանելու և անհրաժեշտության դեպքում հեղինակը պատրաստ է տրամադրել գրքի բարձրորակ կրկնօրինակներ էլեկտրոնային վիճակով:

IslamLand

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2.ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԻՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ.

3. ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

4. ԱՐԴՅՈ՞Ք ԴՈՒՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼ.

5. ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿՅԱՆՔԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ.

6. ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ԻՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ.

7. ԻՍԼԱՄԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՊԱՐԳևՈՒՄ Է ԻՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ.

8. ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

9. ԲԱՐԻ ՄՏՔԵՐԻ ՏԱԾՈՒՄԸ.

10. ՎԱԽԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԴՐԱ ԲՈՒԺՈՒՄԸ.

11. ԳԼՈՒԽ ՉՈՐՍ. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄՏՔԵՐ.

12. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ.

13. ԲԱՌԱՐԱՆ.

IslamLand

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ փառքը միայն Ալլահինն է և թող Ալլահը բարձրացնի մեր Մարգարեյի հիշատակումը և պահպանի նրան , նրա ընտանիքը և ուղեկցորդներին ամեն չարիքից:

Դուք կարող եք գտնել ' երջանկության բանալին ' մի քանի րոպե ընթերցելով այս գրքույկը, այնպես որ, մի շտապեք ունենալով հակառակ կարծիքներ , մինչ ամբողջովին չեք ընթերցել այն: Դուք չեք կարող դատել գիրքը ըստ նրա կազմի , ոչ էլ կարող եք ընթերցել գիրքը , ուղղակի թերթելով այն:

Հարգելի ընթերցող, ես կարծում եմ , որ դուք կհամաձայնեք ինձ հետ , որ մենք ապրում ենք գեղեցիկ աշխարհում , որը արժանի է զննման , արարածների, ովքեր բնակվում են այնտեղ , մոլորակների և նրանց բարդ համակեցությունը , ծանր մարմինները և գալակտիկաները , որոնք կարող են վկայել բավական ապացույցներ : Եթե չլիներ Արարիչը ամենը կընկներ քաոսի մեջ: Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

**«Հնարավոր չէ , որ արևը հասնի լուսնին , ոչ էլ գիշերը հանկարծակիի բերի օրը , սակայն , յուրաքանչյուրը ուղեծրում լողում է :»** (36 :40)

Այս ծանր մարմինները կշարունակեն իրենց ուղեծրում այնքան ժամանակ , մինչ Արարիչը կհրամայի , որ դրանք կանգ առնեն , և այդ պահից, կտարածվի քաոսը , մոտեցնելով այս կյանքի վերջը , ինչպես մենք գիտենք : Աստվածը, Ամենաբարձրյալը ասաց.

**«Երբ երկինքը առանձնանում է կոտրվելով , և երբ աստղերը ընկնում են ,և երբ ծովերը բռնկվում են , և երբ (պարունակությունը) գերեզմանների ցրվում են , այսինքն , (տարածվում են) :»** (82 :1- 4)

Մինչ շարունակելը , հարց պիտի տրվի. Ո՞րն է այս ամենի արարման նպատակը: Արդյո՞ք այն արարվել է ապարդյուն: իսկ ի՞նչ կասեք հրաշք մարդ արարածի մասին , որին Ամենաբարձրյալ Աստվածը ասել է .

**« Օ, Մարդկություն , ի՞նչն է ձեզ մոլորեցրել կապված ձեր Տիրոջ հետ, Ողորմած , Ով արարել է ձեզ , ձևավորել է ձեզ և հավասարակշռել է ձեզ: Ինչ ձևի Նա ցանկացել է, Նա հավաքել է ձեզ: »** (82 :6-8)

Գալիս է մեր փոքր մտքերից. Մեր կյանքի ընթացքում մենք բաներ ենք անում , որոնք հիմնականում նպատակային և մտադրված են , այնպես որ շահեկան լինի , համապատասխանորեն , Աստվածն էլ է անում է ամենը աստվածային իմաստությամբ և նպատակով: Նա, Ամենաբարձրյալը ասաց.

**« Ապա, դուք մտածե՞լ եք , որ Մենք արարել ենք ձեզ անօգուտ և որ , Մեզ դուք ձեք վերադառնա: Այսպիսով, բարձրյալ է Ալլահը , Գերիշխան , Ճմարիտ , չկա աստված , բացի Նրանից , Արժանի Գահի Տերը:»** (24 :115-6)

Մեր շուրջ գտնվող աշխարհը և երկինքը մեր գլխավերևում բավարար լայնարձակ է ստիպել մեզ հարցնելու տրամաբանական հարց , ո՞վ է արարել և կատարելագործել այս ամենը : Անարատ մարդկային էությունը և առողջ ինտելեկտը կառաջնորդեն գիտակցելու Տիրոջը ,ինչպես Գերագույն Արարիչ: Ամենաբարձրյալ աստվածը[1] ասաց.

**««Ով հիշատակում է Ալլահին կանգնած կամ նստած , կամ պառկած իրենց կողքին և տալիս է մտքեր երկնքի արարածներին և երկրի , ասելով .« Մեր Տեր , Դու չես արարել այս անիմաստ , բարձրյալն ես Դու , ամենից վեր , ապա պաշտպանեք մեզ կրակի պատժից :»»** (3 :191)

Նա, Ով արարել է այս տիեզերքը ոչնչից , կբերի այն ավարտի , այնպես որ հավերժ կյանքը կսկսի : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

**« Օրը , երբ , Մենք կծալենք երկինքը ինչպես գրառումների ծալովի թուղթ: Ինչպես Մենք սկսել ենք առաջին արարումը , Մենք կկրկնենք այդ: Այդ պարտադիր խոստում է Մեր կողմից: Իրոք , Մենք կանենք այդ: »** ( 21 : 104)

Դուք , մարդ արարածներդ , կլինեք առարկա , ինչպես տիեզերքն է առարկա մեր շուրջ: Դուք կհեռանաք այս կյանքից, բայց գոյություն ունի մեծ տարբերություն : Դուք հարություն կառնեք և հաշվետու կլինեք ձեր արաքների համար , որից հետո դուք կստանաք հավերժ երանություն , կամ կավարտեք անվերջանալի տանջանքների անդունդում: Իրոք , Նա, Ով արարել է ձեզ զրոյից , կարող է հեշտությամբ նորից արարել ձեզ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

**« Եվ այդ Նա է , ով սկսել է արարումը , հետո Նա կրկնում է այդ և այն , նույնիսկ ավելի հեշտ է Նրա համար : Նրան է պատկանում ամենաբարձր նկարագրությունը , այսինքն, հատկանիշը երկնքում և երկրում : Եվ Նա բարձրյալ է Հզորությամբ և Իմաստությամբ : »** (30 : 27)

---

[1] Ղուրանում օգտագործվող բառը Ռաբբ է ; Անգլերենում դրան համապատասխան բառ չկա ; Այն նշանակում է Արարիչ , Ձևավորող , Մատակարարող , Մեկը , Որից բոլոր արարածները կախված են իրենց գոյությամբ , էությամբ և Մեկը , Ով պարգևում է մահ և կյանք :

Որոշ մարդիկ կարող են կարծել , որ այս ամենը անհնար է , բայց նայեք ձեր շուրջ: Նայեք անապատ հողերը , որոնք չեն ստանում կաթիլ ջուր անգամ , կյանքի նշույլ չի երևում , սակայն տեսեք, երբ անձրև է գալիս և երկիրը ճեղքվում է , բուսականությունը դուրս է գալիս , խուսափելով որևէ սխալ պատկերացումից , մարդ կարող է կարծել , որ բուսականությունը այդ տարածքում չի կարող գոյություն ունենալ : Այս հաստատուն նշան է , որ հարությունը անխուսափելի է : Ամենաբարձյալ Ալլահը ասաց.

« **Եվ , Նրա նշաններից է, որ դուք տեսնում եք երկիրը հանդարտ , բայց ,երբ Մենք ուղարկում ենք անձրև , այն երերում և աճում է : Իրոք , Նա , ով տալիս է դրան կյանք , մահացածին Կյանք Տվող է: Իրոք, Նա ամենի իրավասուն է** :» (41 : 39)

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԻՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք դուք գիտե՞ք ինչ է երջանկությունը : Այն սահմանվել է որպես հոգու համակրելի զգացմունք կամ իրավիճակ, որը ծագում է լավ ճակատագրից , հիմնված սիրո վրա:

Յուրաքանչյուր անձ , պետք է ունենա նպատակ , որին պիտի ձգտի հասնել և որքան նա ի վիճակի է ավարտուն տեսքի բերել այդ , երջանկության զգացումը ավելի մեծ է լինում:

Հոգեբանները սահմանում են երջանկությունը հաճույքի , բավարարման , հրճվանքի , առաքինության զգացմունք , որը աճում է անձից , կյանքից , հավատքից , այն մտքից . որ նրանք կունենան հաջող ճակատագիր :

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Այս սահմանմամբ , մենք կարող ենք երջանկությունը տեսակավորել երեք խմբերով :

**ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԸ.** Կեղծ երջանկություն , որը տևում է միայն մի որոշ ժամանակ: Այս տեսակի երջանկությունը հանկարծակի լավ ապազայի արդյունք է : Շատերը հավատում են , որ երջանկությունը կարող է ձեռք բերվել

թմրանյութի կամ գայթակղության միջոցով ։ Նրանք օգտագործում են թմրանյութ կամ ոգելից խմիչք , խուսափելու ամենօրյա կյանքի խնդիրներից ։ Թմրամոլը ստանում է երջանկության երևակայություն , որը արագորեն չքանում է դրա ավարտից հետո , և անձը ընկնում է ավելի նողկալի իրավիճակ ։ Այս ամենը , հետո , կարող է դրդել նրան ավելի շատ թմրանյութերի , որը կհանգեցնի կախման և անձը կդառնա հասարակությանը անպիտան: Հետագայում , այս անհատը կարող է ունենալ որոշակի հոգեբանական և ֆիզիկական հիվանդություններ ։

**ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԸ.** Երջանկությունը իրագործվում է , երբ կատարվում են նպատակները ։ Այն նման է նախորդին, սակայն տարբերվում է ։ Այս տեսակի երջանկությունը կարճատև է , բայց ավելի ապահով է քան նախորդը ։ Երբ մեծ ջանքեր են դրվում հասնելու նպատակին և վերջապես այն իրագործվում է , մարդ զարմանում է , թե ինչ է հաջորդը ։ Ցավը նպատակին հասնելուց հետո , որոշ չափով նման է առաջին տեսակի երջանկության ցավին ։

Եզրակացնելով, կարելի է ասել այս տեսակի երջանկությունը կարճատև է , որը մարդուն երջանկացնում է որոշ ժամանակ ։

**ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿ.** Իրական երջանկություն: Այսպիսի երջանկությունը կմնա անհատի հետ ամեն պարագայում , հրճվանքի և տխրության մեջ, աղքատության և բարգավաճման , հիվանդության և առողջության ժամանակ և նա կստանա այս աշխարհից ինչ ցանկանում է , կամ ոչ ։ Այս երջանկությունը մարդու հաստատուն հավատքի արդյունքն է ։

## ԱՐԴՅՈ՞Ք ԴՈՒՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԻՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ.

Այս հարցը կարող է տարօրինակ թվալ , մինչ այդ պատասխանը ակնհայտ է ։

Ես հավատում եմ , որ ցանկացած գիտակից անձ, կպատասխանի դրականորեն ։ Այսպիսով , ինչպե՞ս մարդ կարող է հասնել երջանկության ։ Յուրաքանչյուր անհատ ունի իր ուրույն ձևը հասնելու երջանկության ։ Որոշները հավատում են , որ երջանկությունը գումար վաստակելու մեջ է , մինչ ուրիշները այն տեսնում են իշխանության մեջ: Որոշները տեսնում են երջանկությունը շատ ընկերներ ունենալու և նրանց վրա ազդեցություն ունենալու մեջ ։ Եթե մենք հարցնենք որևէ մեկին, ով փորձում է հասնել նպատակի , արդյոք նրանք հասել

են իրական երջանկության , ապա պատասխանը կլինի բացասական : Պատճառը պարզ է , իրական երջանկությունը շարունակական զգացում է հանգստության և խաղաղության : Մարդ չի կարող գործնական տեսքի բերել այն , նույնիսկ եթե ունենան երկրի չափ ոսկի , ինչպես ասում է արաբական ասացվածքը . « Մարդ կարող է գնել անկողին, բայց անշուշտ, չի կարող գնել քունը :»

Շատ անգամներ հավատքը կհեռացնի մարդուն իրական երջանկությունից , որովհետև այն պահանջում է հավատալ անհավատալիին և անտրամաբանականին : Հոգևոր դատարկությունը , որը ուղղորդում է թշվառության, չի կարող փոխարինվել այնքան ժամանակ, մինչ մարդը ընդունում է իրական հավատքը , որը նպաստում է անհատականությանը և սահմանում է կյանքում իրական նպատակ :

Հասնել իրական երջանկության հեշտ է , սակայն աղբյուրը որից դուք կարող եք հասնել դրան , մնում է առեղծված շատերի համար : Եթե մարդ իրոք փնտրում է երջանկություն , նա պիտի զոհաբերի ամեն հնարավորը հասնելու դրան : Այդ նշանակում է , որ պետք է պատրաստ լինել փոփոխությունների դեպի լավը : Իրական երջանկությունը կարող է միայն ձեռք բերվել Իսլամ ընդունելով : Որոշ մարդիկ կարող են թերհավատորեն մոտենալ ասածին , բայց այն իրականություն է : Ընդունելով Իսլամ ամբողջ սրտով և կատարելով պատվիրանները երկու աղբյուրներից , Ղուրանից և Սուննայից[2] ,կարելի է իրականացնել ճշմարիտ երջանկությունը :

' Ինչու՞ ' –ն հարց է , որը կարող են հարցնել մեծամասնությունը : Մինչ պատասխան տալը , կտրվի երջանկության սահմանումը և ուսումնասիրությունը : Հոգեբանները հաստատում են , որ երջանկությունը հաճույքի , բավարարվածության , առաքինության , հրճվանքի շարունակական զգացում է , որը աճում է անձի ինքնաբավարարվածությունից , կյանքից և ճակատագրից : Անձը կհասնի այս ամենին Իսլամի միջոցով : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

« **Իրոք, Մուսուլման տղամարդիկ և Մուսուլման կանայք , հավատացյալ տղամարդիկ և հավատացյալ կանայք , ենթարկվող տղամարդիկ և ենթարկվող կանայք , ճշմարիտ տղամարդիկ և ճշմարիտ կանայք , համբերատար տղամարդիկ և համբերատար կանայք , հնազանդ տղամարդիկ և հնազանդ կանայք, պահք պահող տղամարդիկ և պահք պահող կանայք , տղամարդիկ , ովքեր պահպանում են իրենց մասնավոր մասերը և կանայք , ովքեր անում են այդպես , և տղամարդիկ , ովքեր հիշատակում են Ալլահին հաճախ և կանայք ,**

[2] Սուննան Մարգարեական ավանդույթներ են: Դրանք ներառում են նրա գործողությունները , մոտեցումները և կարծիքները :

**ովքեր անում են այդպես , նրանց համար է Ալլահը պատրաստել ներում և մեծ պարգև** :» ( 33 : 35 )

Կյանքի բավարարվածությունը նույնպես երաշխավորված է Ամենաբարձրյալ Ալլահից.

« **Դուք արարված լավագույն ազգն եք , որպես օրինակ մարդկության համար : Դուք հրամայում եք ինչ ճիշտ է և արգելում եք ինչ սխալ է և հավատում եք Ալլահին : Եթե միայն , Գրերի Մարդիկ հավատային , լավ կլիներ նրանց համար : Նրանց մեջ կան հավատացյալներ , սակայն , նրանց մեծամասնությունը անհնազանդ են** :» (3 : 110)

Բավարարվածությունը նույնպես խոստում է Ամենաբարձրյալ Աստծոց հաջորդ կյանքում , Նա ասաց.

« **Իրոք, նրանք , ովքեր հավատացել են և առաքինի արարքներ են արել, նրանք կունենան Այգիներ Դրախտում** [3] **որպես կացարան , որտեղ նրանք կբնակվեն հավիտյան : Նրանք չեն ցանկանա այնտեղից որևէ տեղափոխություն** :» (22 : 107-108)

Էականում , իրական երջանկությունը որոշ գործոնների արդյունք է և չի կարող հասնել առանց հավատքի , որը հավասարակշռում է կյանքի նյութական և հոգևոր գործոնները :

Աշխարհիկ , մարդու կողմից կերտված նոր հավատքները և կուլտերը , որոնք ուղղված են մեծամասնությամբ զանգվածներին , որդեգրված են ինչպես արձագանք Իսլամին : Այս բոլոր համակարգերը համարվում են անհամապատասխան և չունեն խնդիրների տրամաբանական լուծումներ , որոնց առջև մենք կանգնած ենք հիմա : Այս հայտարարության ճշտությունը պարզ է , մարդ չպետք է տեսնի այնքան հեռուն , որքան կործանված Սովետական Միությունը և կառավարող կապիտալիստական համակարգը , որը կործանման եզրին է : Այս երկու համակարգերի անհաջողության պատճառը պարզ է , նրանք հիմնված են կեղծ դոկտրինների և անհեռատես կարծիքների վրա : Հայտնի արաբական այլաբանությունը .« Ես հիշում եմ խնդիրը և մոռացել եմ շատ ուրիշները » անկասկած կարող են վերաբերվել այս '' Մարգակերտ '' համակարգերին :

Մեծամասնությամբ , ''մարդակերտ'' համակարգը օգտագործվում է այնպես, որ մարդ կարող է հասնել անձնական շահերի և ուրիշների նկատմամբ անարդար

[3] Այս Երկնային Կացարաններ են կամ Երկնային Այգիներ , որոնք Ալլահը կպարգևի առաքինի ստրուկներին Հանդերձյալ Կյանքում :

վերաբերմունքի: Այն արտահայտում է երկու ծայրահեղություններ, անհատի գերիշխանությունը հասարակության նկատմամբ կամ հակառակը : Իսկ ամենավատը այն է , որ այդ մարդակերտ համակարգերը կիշխեն կյանքի նյութական գործոնում , հոգևորի նկատմամբ :

Իսլամը հակառակը, ներկայանում է մարդկությանը կատարյալ հավասարակշռությամբ : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

**« Եվ , այսպիսով , Մենք արարել ենք ձեզ ուղղակի հասարակություն , որ դուք վկա լինեք մարդկանց և Մարգարեն վկա լինի ձեզ:»** ( 2 : 143)

Մարգարե Մուհամեդը (Խ.Ա.Ո.Ն )[4] ասաց իր ուղեկցորդ Աբդուլահ իբն Ումարին , թող Ալլահը գոհանա նրանով .

**« O , Աբդուլահ, ինձ տեղեկացրել են , որ դու շարունակական ձևով պահք ես պահում օրեր և աղոթում ես գիշերները :» Նա ասաց. «Այո, ես այդպես եմ անում :» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրան. « Մի արա այդպես, պահք պահիր մեկ օր և հաջորդ օրը ոչ, աղոթիր գիշերվա մի մասը և հետո քնիր , քանի որ , իրոք, քո մարմինը ունի իրավունք քեզ վրա , քո աչքերը ունեն իրավունք քեզ վրա և քո կինը ունի իրավունք քեզ վրա :»** (Բուխարի)

Նյութապաշտները փորձում են թերագնահատել հոգին և դիտել կյանքը ինչպես գործիք , որի միջոցով կարող են բավարարել իրենց ցանկությունները : Նրանք ամբողջովին թերագնահատում են կյանքի հոգևոր կողմը : Եվ այս , շատ տարածված է արևմուտքում , քանի որ շատերը հեռացել են կրոնից : Այստեղ կարելի է հարցնել , արդյո՞ք այն բերում է երջանկության : Ցանկացած տրամաբանող , մտածող էակ կգտնի բացասական պատասխան : Եթե լքված կրոնը երջանկության բանալի է, ազդեցիկ անհատներ , ինչպիսիք են Քրիստինա Օնասիսը , չէին գործի ինքնասպանություն : Նա բիլիարդերի հայտնի զավակ էր , ով հեռացավ կյանքից և թողեց նրան մեծ հարստություն : Մի լրագրող հարցրեց նրան , երբ նա Ֆրանսիայում էր . « Արդյո՞ք դուք աշխարհի հարուստ կանանցից մեկն եք:» Նա պատասխանեց . « Այո , ես եմ , բայց միևնույն ժամանակ ես ամենադժբախտն եմ :»

Զարմանալի է , նա ուներ աշխարհի գումարը , բայց և երջանիկ չէր : Այս դժբախտության պատճառը կյանքից հոգևորի հեռացումն էր : Այս հանգամանքը անմիջապես ազդում է հոգու հիվանդության վրա , որը հոգևոր ախտ է : Բուժումը բավական պարզ և անվճար է : Այն Ամենաբարձրյալ Աստծո

[4] Այս տառերը նշանակում են « Թող Ալլահը բարձրացնի իր նշանակությունը և պահպանի նրան և նրա ընտանիքը ապահով ամեն վտանգից:»

հավատքն է , որը Նա տվել է մարդկությանը : Այս հզոր ախտի բարձիթողը կհանգեցնի կործանման , ինչպես տեսանք Քրիստինայի պարագայում :

Սկանդինավիան , որը համարվում է առողջ երկրներից մեկը աշխարհում , ըստ անձնական և կառավարական մակարդակի , կարող է ապրել հոյակապ կյանք : Տարօրինակ կերպով , այն ունի աշխարհում ամենաբարձր ինքնասպանության մակարդակը: Իսլամական երկրները , որոնք համարվում են 'երրորդ աշխարհի' երկրներ , ունեն ինքնասպանության շատ ցածր տոկոս, տարեկան մի քանի հոգի :

Ֆ. Ֆիլուասը[5] ասաց. « Արևմուտքը տառապում է հզոր հոգևոր կորստից , որի ոչ մի սկզբունք կամ հավատք չի կարող բերել երջանկության : Չնայած այնտեղի մեծ ազդեցության և այսպես կոչված տնտեսական բարգավաճման , բացի մարդկային ֆիզիկական բավարարվածությունից , արևմուտքի մարդը ունի կյանքի անիմաստության զգացում : Նա ապշում է , թե ինչու է ապրում , ուր է գնում և ինչու : Բայց , որ ոք չի տվել նրան բավարար պատասխան : Դժբախտաբար , նա գաղափար չունի անգամ , որ իր բուժումը ճիշտ կրոնն է , որի մասին նա չունի գաղափար, բացի միայն կասկածներից : Ամեն դեպքում , լույսի սկիզբը սկսվել է այն բանից հետո , երբ որոշ արևմուտքի մարդիկ ընդունեցին Իսլամ և սկսեցին ակնհայտորեն ցուցադրել մարդկանց Իսլամը գործնականում և նրա ուսմունքը : Եվ այնտեղ ամեն օր որոշ մարդիկ ընդունում են իրական կրոնը : Այն միայն սկիզբն է :»

Հոգին մարմնի պես պիտի բավարարված լինի : Եթե այն չհամալրվի, ապա մարդ կունենա անհանգստություններ , անբավարարվածության և դժբախտության զգացում : Հոգին բավարարվում է իրական հավատքով Միակ Աստծո նկատմամբ և այն հավատմունքով , որ Նա հարություն կտա մեզ և հաշվի կնստեցնի մեր արարքների համար : Անհրաժեշտ է լավ արարքներ անել և խուսափել չարիքից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. « **Նրանք , ովքեր հավատացել են և ում սրտերը լի են Ալլահին հիշատակելով : Անկասկած սրտերը Ալլահի հիշատակումով լի են** :» (13 : 28 )

Լիարժեքությունը , երջանկությունը , բավարարվածությունը մուսուլմանի գործնական զգացումներն են : Գիտնական , Իբն Տայմիյան , թող Ալլահը գթա նրան, բանտարկումից, տանջանքներից և արտաքսումից հետո ասաց. « Ի՞նչ կարող են իմ թշնամիները անել : Իմ դրախտը և այգիները իմ սրտում են և դրանք երբեք չեն լքում ինձ : Եթե ինձ կալանողները բանտարկեն ինձ , ապա այն կլինի կրոնական մեկուսացում , եթե նրանք սպանեն ինձ , այն կլինի

[5] Բրիտանացի ծովային սպա , ով մասնակցել է երկու համաշխարհային պատերազմներում և ով ընդունեց իսլամ 1924 թվականին Սուրբ Ղուրանը և Իսլամի մասին գրքեր կարդալուց հետո :

նախատակություն և եթե նրանք արտաքսեն ինձ իմ երկրից , այն կլինի ուղնորություն : »

Այս խոսքերը ուղղակի հրաշք են : Նրան բանտարկել և անարգել էին և այս ամենից հետո սրանք են նրա խոսքերն են : Իրական հավատքով մարդը երջանիկ կլինի անընդհատ : Իսլամը կտա մարդուն կատարյալ հոգևոր երջանկություն և բավարարվածություն , անկախ ֆինանսական և սոցիալական պայմաններից : Իրական մուսուլմանը երջանիկ է ամեն պարագայում , լինի նա առողջ , թե հիվանդ , աղքատ , թե հարուստ , ապահով , թե անապահով : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«« **Երբ դժբախտությունը հասնում է նրանց, նրանք ասում են .« Իրոք, մենք պատկանում ենք Ալլահին և իրոք, Նրան մենք կվերադառնանք : Այդ նրանք են , ում պատկանում են իրենք Տիրոջ օրհնությունը և գութը և այդ նրանք են , ովքեր ճիշտ ուղղու վրա են** : »» (2 : 156-157)

Աստծո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) ասաց.

« **Իրոք, հիասքանչ է հավատացյալի գործը , նրա բոլոր գործերը անսահման լավ են նրա համար և այս միայն հավատացյալի համար է : Երբ նրան զարդարում է օրհնությունը , նա շնորհակալ և երախտապարտ է Աստծոն, և այդ լավ է նրա համար և , երբ նրան հասնում է դժվարությունը , նա համբերատար է և այդ , լավ է լինում նրա համար** :» (Մուսլիմ )

Իսլամի ուսմունքը մոռացության է տալիս անհանգստությունները և դարձնում է մարդուն համբերատար : Այն տեղափոխում է մարդուն անհանգստությունից բավարարվածություն:

Եվ անհրաժեշտ է նշաել մի բան , որ Իսլամը իր հետևորդներին չի պատվիրում դառնալ վանականներ կամ հեռու մնալ աշխարհիկ հաճույքներից , հակառակը , այն առաջարկում է հավատացյալին իրագործել աշխարհիկ ցանկություններ , որոնք նրան երջանկություն կպարգևեն :

Ով ունի իշխանություն , պետք է օգտագործի այն տարածելու Աստծո կրոնը[6] և հոգ տանի իր կարիքավոր եղբայրներին և քույրերին : Աստված ասում է .

«**Ով միջնորդում է բարիքի , կունենա բաժին , այսինքն, պարգև դրանից և ով միջնորդում է չարիքի , կունենա բաժին , այսինքն, բեռ դրանից : Եվ հավերժ է Ալլահը , ամենի Պահապանը** :» (4 : 85)

---

[6] Կրոն բառը թարգմանվում է ինչպես 'Դին' , որը արաբերենում նշանակում է կյանքի ուղղի , որն էլ և անձնական և հասարակական է : Այն նշանակում է , երկրպագման գործողություններ , քաղաքական մոտեցում , բավարարվածություն, հիգենա և վարվելակարգ:

Ով ունի ունեցվածք, պետք է օգտագործի այն Աստծո ճանապարհին և օգնի լուծել իր եղբայր - ընկերների խնդիրները: Աստված ասում է.

**«Եվ նրանք, ովքեր ունեն ունեցվածք, պետք է իմանան դրամատոյի և զրկվածի իրավունքները**:» (70 :24-5)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պարզաբանում է, թե ինչ կլինի մարդու ունեցվածքի հետ: Նա ասում է.

**«« Ադամի որդին կասի. « Իմ ունեցվածքը, իմ ունեցվածքը » և նրան կասվի. « Օ, Ադամի որդի, քո ունեցվածքը ոչ այլ ինչ է, այն, որ դու սպառում ես և այն վերածվում է կորստի, կամ այն, որ դու կրում ես և այն մաշվում է, կամ այն, որ դու բարեգործության ես տալիս և պահում ես քեզ համար**:»» (Մուսլիմ)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) օրինակ է բոլոր մուսուլմանների համար և ամեն մուսուլման ջանում է նմանվել նրան: Աբու Դհարը, Մարգարեյի ուղեկցորդներից մեկը, ասաց. "Ես քայլում էի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ Մեդինայում, մինչ հասանք Ուհուդ լեռ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Օ, Աբու Դհար. « Ես պատասխանեցի .« Այո, Ալլահի Մարգարե :» Նա ասաց. « Եթե ես ունենայի Ուհուդ լեռան չափ ոսկի, ես կվատնեյի այն երեք օրում և կվերցնեյի դրանից միայն վճարելու պարտքերը :» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հետո ասաց. « Նրանք, ովքեր ամենահարուստներն են այս աշխարհում, կլինեն ամենաաղքատը Հարության Օրը, բացի այն դեպքերից, եթե նրանք վատնել են Ալլահո ուղղու վրա և իրոք, նրանք շատ քիչ են :»» (Բուխարի)

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿՅԱՆՔԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կյանքի իսլամական ուղղին, իրոք, այն է, ինչը կհանգեցնի իր հետևորդներին իրական երջանկության, այն պայմանով, եթե նրանք հետևեն պատվիրաններին և խուսափեն արգելքներից: Իսլամի պատվիրաններում զրկանք չկա: Հակառակը, այն օրենքների աստվածային համակարգ է, որը տրվել է մեզ մարդու Արարչից: Նա լավագույնը գիտի, թե այս կյանքում ինչը կլինի ավելի լավ մեզ համար: Եկեք դիտենք այս պատվիրաններից մի քանիսը և տեսնենք ,արդյոք նրանք ունեն առավելություններ, թե ոչ:

1. **ՎԱՃԽԱՌՈՒԹՅՈՒՆ.** Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

**« Օ, դուք , ովքեր հավատացել եք , վախեցեք Ալլահից և դադարեք վերցնել վաշխառություն, եթե դուք հավատացյալներ եք** :» (2 : 278)

Ցանկացած գիտակից մարդ կիմանա , որ վաշխառությունը անարդարության տեսակ է , որով մարդ ունեցվածք է ձեռք բերում պակաս հարուստներից : Կարճ ասած, այն ագահության , ճնշման և մարդկային թուլության ձև է : Տնտեսական տեսանկյունից , այն սահմանափակում է հարստությունը մի քանիսի ձեռքում : Շատ ոչ մուսուլմաններ դեմ են խոսել այդ համակարգի դեմ և հաստատել են սխալները :

2. ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.

Արևմտյան հասարակությունում բնակվողները լավ կիմանան սեռական ազատության մեծ վտանգները : Վտանգ են ներկայացնում հիվանդությունները , որոնք տարածում են գտել : Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

**« Մի մոտեցեք անօրինական սեռական հարաբերության : Իրոք, այն անբարոյականության և չարիքի ուղղի է** :» (17 : 32)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**« Եթե անօրինական սեռական հարաբերությունները տարածում գտնեն մարդկանց մեջ , ապա այնպիսի հիվանդությունները կտարածվեն նրանց մեջ, ինչպիսիք նախորդ սերունդները չեն տեսել** :» ( Իբն Մաջահ )

3. ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ. Ոգելից խմիչքի օգտագործումը հաստատվել է ժամանակակից բժշկությամբ : Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

**« Օ, դուք , ովքեր հավատացել են , իրոք, հարբեցուցիչները, խաղամոլությունը , քարերի վրա զոհաբերությունը ոչ Ալլահին և սուրբ նետերը, ոչ այլ ինչ են, քան սատանայի աշխատանքի աղտ , այսպիսով , խուսափեք դրանցից , որպեսզի հաջողակ լինեք : Սատանան միայն ցանկանում է ձեզ պատճառել թշնամություն և ատելություն հարբեցուցիչների , խաղամոլության միջոցով և ետ պահել ձեզ Ալլահին հիշատակելուց և աղոթելուց : Այսպիսով ,դուք չե՞ք դադարի**:» (4 : 90 -91 )

Կան շատ բժշկական պատճառներ ոգելից խմիչքների արգելման համար : Մենն տարի դրա արդյունքում միլիոնավոր մարդիկ են մահանում : Ոգելից խմիչքների հետ կապված կան ատ հիվանդություններ , այդպիսիք են .

- Լյարդի հիվանդությունը
- Քաղցկեղի տարբեր տեսակները
- Օսսեֆագիտիսը, ստամոքսի քաղցկեղը , պանկրիտիսը և հեպատիտը

- Սրտային հիվանդությունները , բարձր ճնշումը , անգինանա և կաթվածքները
- Կաթվածքները , և տարբեր տեսակի պարալիչները
- Ծայրամասերի կաթվածքը , նյարդերի հյուծումը , և հյուսվածքների հյուծումը
- Բազմաթիվ էնդոկրինալ խանգարումները
- Սակավարյունությունը , լեյկոցիտների և տրոմբոցիտների անկանոնությունները
- Կրծքավանդակի վարակները , թոքաբորբը , էմֆիզեման և թոքախտը
- Հղիության ընթացքում ոգելից խմիչքները ունեն ծանր ազդեցություն պտղի վրա

4. **ԱՊՈՒԽՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.** Ժամանակակից բժշկությամբ ապացուցված է, որ խոզի միսի , ապուխտի օգտագործումը ազդում է առողջության վրա : Շատ հիվանդություններ տարածվում են մանավանդ այն ժամանակ, երբ այն լավ չի եփվում :[7] Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

**« Արգելված է ձեզ սատկած կենդանիները , արյունը , խոզի միսը և այն ամենը , ինչ մորթվել է ոչ Ալլահի անունով և այն կենդանիները , որոնք սպանվել են պայքարով կամ բռնի հարվածով , գլխին հարվածով կամ պոզահարությամբ , կամ նետահարությամբ և նրանք , որից կերել են վայրի կենդանիները , բացի այն կենդանիներից , որոնք դուք կարող եք մորթել մինչ սատկելը, և նրանք , որոնք զոհաբերվել են զոհասեղաններին և նաև արգելված է, որ դուք որոշում փնտրեք աղեղներից : Այս ամենը ծանր անհնազանդություն է : Այդ օրը նրանք , ովքեր չեն հավատացել և հուսալքել են ձեր կրոնը , այսպիսով մի վախեցեք նրանցից , այլ վախեցեք Ինձանից : Այդ օրը ես կատարյալ եմ դարձրել ձեզ համար ձեր կրոնը և լիիրավ եմ դարձրել իմ գթասրտությունը ձեր վրա և հաստատել եմ ձեզ համար Իսլամը որպես կրոն : Բայց , ով ստիպված է դաժան սովից ելնելով շեղվել դեպի այդ մեղքը , իրոք, Ալլահը Ներող և Գթասիրտ է :»** (4 :3)

Պրոֆեսոր Հանս Հեյնրիխ Ռեքեվեգը , բժշկության դոկտորը , ասաց. «« Խոզի միսի սպառումը , խեղդում է կապող հյուսվածքները լորձայինի հետ , դրան ավելացրած , այն հարուստ է ճարպերով ,և նա , ում դիետան բաղկացած է

[7] Դաուն Բեքերան , մի ամերիկացի , ով Մեքսիկայում հանգստանալու ընթացքում կերել է խոզի միսից պատրաստված տակո, որից հետո որդը անցել է ուղեղը : Արիզոնա նահանգի Աքորթսդայլ Կլինիկայի բժիշկները հավատում են , որ տակոն ունի Տաենիյա սոլիյում , պարազիտ , որը հաճախ անցնում է խոզի միսից մարդուն :

շատ խոզի մսից , շուտով նմանակում է կենդանուն, որը ուտում է: Մենք բոլորս գիտենք ասացվածքը «Դու այն ես , ինչ ուտում ես :»»[8]

5. ՊԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ . Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

**« Եվ , կա ձեզ համար օրինական հատուցման մեջ կյանքի փրկություն, Օ, դուք , հասկացող մարդիկ , որ դուք կարողանաք դառնալ առաքինի** :» (2 : 179)

Ամենաբարձրյալ Աստվածը իրավմամբ ասել է ճմարտությունը : Երբ պարտադրողական պատիժները իրականանում են , դրանք փրկում են մարդկանց կյանքերը և պահպանում են մարդկանց հարստությունը և պատիվը և հասարակությունը ընդհանուր առմամբ:

Ցանկացած համակարգի հաջողության համար անհրաժեշտ է ազդեցիկ ուժ , որը կարող է աջակցել : Մարդիկ ազատ ձևով կարող են անցնել կարմիր լույսով , եթե ոչ մի համակարգ չպատժի այդպիսիններին : Զսպման բացակայության դեպքում մարդիկ գողություն կանեն : Կարճ ասած, անհրաժեշտ է ազդեցիկ ուժի առկայությունը , որպեսզի համակարգը պահպանվի : Եթե այդպիսի ուժ գոյություն չունենա , ապա քաոսը կտարածվի :

Պարտադրողական օրենքը նորույթ չէ , այն սովորական երևույթ է եղել նախորդ աստվածային համակարգերի օրենքներում : Ամենաիմաստուն Աստվածը ասում է .

**« Եվ Մենք սահմանել ենք նրանց համար այնտեղ , կյանք կյանքի դիմաց , ակն ական , քիթն քիթ , ականջ ընդեմ ականջ , ատամ ընդ ատամ և վերքերի համար կա օրինական հատուցում : Բայց , նա , ով տալիս է իր իրավունքը որպես բարեգործություն, այն դառնում է քավություն նրա համար : Եվ , նա ով չի դատում Ալլահի լուսաբանումներով , ապա նա սխալ արարքներ անողներից է, այսինքն , անարդարներից** :» (5 : 45)

Հարց է ծագում , թե պարտադրող պատժի ո՞ր տեսակն է ավելի արդյունավետ հասարակության մեջ ոճրի նվազեցման համար : Արդյո՞ք աստվածային պարտադրողական օրենքները կերտված Արարչի կողմից վեր են մարդու կողմից կերտված օրենքների համակարգից : Մարդու կերտած օրենքները ավելի շատ առավելություններ են տալիս կեղեքիչին , քան կեղեքվողին : Նրանք հեշտությամբ կարող են կրկնօրինակվել և անձը կարող է խուսափել սպառնացող պատժից : Ապացուցված է , որ ոչ մի օրենքի համակարգ արդյունավետ չէ , որքան Իսլամը :

[8] Կենսաբանական Թերապիա Հատոր 1, Համար 2 1983

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ . ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ԻՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ

Իրական երջանկությունը հասանելի է հիմնական բանալի հանդիսացող որոշ հավատամքների միջոցով.

## ԱՌԱՋԻՆ ՍՅՈՒՆԸ. ՀԱՎԱՏՔ ԱՌ ԱՍՏՎԱԾ և ՆՐԱ ՄԻԱԿՈՒԹՅԱՆԸ

Ով հավատում է Ալլահին և Նրա Միակությանը , կուղղորդվի երջանկության ուղղի: Նրա սիրտը կլինի լի և նա կապրի կատարյալ հանգստությամբ : Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

« **Նրանք , ովքեր հավատացել են և ում սրտերը հաստատվել են Ալլահի հիշատակմամբ : Անկասկած , Ալլահին հիշատակելով սրտերը հաստատվում են** :» (13 : 28)

Երբ մարդ գիտի իր Արարչի հզորությունը , ով արարել է ամենը և ամենի կառավարողն է , նա դառնում է ավելի հնազանդ : Ոչինչ նման չէ Նրան : Ամենաբարձրյալ Աստվածն ասաց.

« **Ալլահ, չկա Աստված բացի Նրանից , Հավերժ Ապրող , ամեն գոյության Պահապան : Ոչ նինջը , ոչ էլ քունը չի պատում Նրան : Նրան է պատկանում ինչ երկնքում է և ինչ երկրի վրա է : Ո՞վ կարող է բարեխոսել Նրա հետ, բացի Նրա թույլտվությունից: Նա գիտի , ինչ է ներկայում իրենց առջև և ինչ կլինի նրանցից հետո և նրանք ոչինչ չեն ունենում Նրա գիտելիքներից , բացի այնից , ինչ Նա է ցանկանում : Նրա գահը տարածված է երկնքում և երկրում և նրանց պահպանումը չի հոգնեցնում Նրան : Եվ նա Ամենաբարձրյալը և Ամենամեծն է** :» ( 2 : 255)

Աստծոն հավատքով , մարդ կհասնի իրական երջանկության : Երբ մարդ հանդիպում է փորձության , նա խնդրում է Աստծոն ուղղակիորեն լուծել առաջացած խնդիրը : Աստված ասում է .

**«Եվ երբ Իմ ստրուկները հարցնում են քեզ , օ, Մուհամեդ , կապված Ինձ հետ , ապա , իրոք , Ես մոտ եմ : Ես պատասխանում եմ խնդրողի աղերսին , երբ նա կոչում է Ինձ : Այսպիսով , թող նրանք պատասխանեն ինձ հնազանդությամբ և հավատան Ինձ , որ կարողանան ճշմարիտ առաջնորդվել :»** (2 : 186)

Ճղճիմ է Ամենաբարձրյալ Աստծոն չհավատացողի արդյունքը : Նա , ով չի հավատում Աստծոն, իրոք, կապրի անհանգստությամբ և ճղճիմությամբ լի կյանք : Աստված դրել է մեր մեջ բնական հակում ճանաչելու Երկնքի և Երկրի Արարչին : Աստծոն հետությամբ կարելի է ճանաչել պարզ հետևություններով , ինչպես նշված է հետևյալ տարբերակում :

« Կամ արդյո՞ք նրանք արարվել են ոչնչից , կամ արդյո՞ք նրանք են արարիչները իրենց :» (52 : 35)

Աստծոն հավատքը պետք է կապված լինի Նրա Միակությամբ : Չպետք է զուգընկեր տալ Նրան : Ով անի այդպես, նրա հավատքը օգուտ չի տա նրան : Ամենաբարձրյալ Աստվածը ասաց.

**« Իրոք, Ալլահը չի ներում Իրեն զուգընկեր տալուն , բայց Նա ներում է ինչ ավելի պակաս է քան դա, նրանց , ում Նա է ցանկանում : Եվ նա, ով զուգընկեր է տալիս Ալլահին, իրոք հսկայական մեղք է գործել :»** (4 : 48 )

Աստծոն զուգընկեր տվողը անհարգալից է հենց Աստծո նկատմամբ : Ցանկացած անկատարելություն արժանի չէ աստվածային գովքի , թող միայնակ երկրպագի : Ամենաբարձրյալ Աստվածն ասաց.

**« Արդյո՞ք եղել են այնտեղ , այսինքն, երկնքում և երկրում աստվածներ բացի Ալլահից, նրանք երկուսն էլ կործանված կլինեյին : Այսպիսով , ամենաբարձրյալ Ալլահը, Գահի Տերը , վեր է, ինչ նրանք նկարագրում են :»** (21 : 22)

Ամենաբարձրյալը կարիք չունի իր արարածներից որևէ մեկին , սակայն բոլոր արարածները կարիք ունեն Նրա : Ամենաբարձրյալ Աստվածը ասում է .

**« Ալլահը չունի որդի , ոչ էլ Նրա հետ երբևէ եղել է որևէ աստված: Եթե այդպես լիներ , ապա յուրաքանչյուր աստված կվերցներ ինչ արարել էր և որոշները կփորձեյին հաղթահարել մյուսներին : Բարձրյալ է Ալլահը ամենից , ինչ նրանք նկարագրում են :»** (23 : 91)

## ԱՍՏԾՈՆ ՀԱՎԱՏՔԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ .

IslamLand

1. Այն կազատի մարդուն արարածին ստրկացման ամեն տեսակներից: Երբ մարդ լիովին համոզված է, որ ճակատագիրը Աստծո ձեռքերում է ,և որ կարող է փոխվել Նրա Կամքով , նա կազատի իրեն ամեն տեսակի հոգևոր ստրկությունից և կերկրպագի և կենթարկվի իր Արարչին ամբողջովին : Ամենաբարձրյալը ասաց.

**«« Ասա. « Ո՞վ է երկնքի և երկրի Տերը :» Ասա, « Ալլահը» : Ասա. « Դուք վերցրե՞լ եք բացի Նրանից աստվածություն, ովքեր չունեն նույնիսկ իրենց համար առավելություն կամ որևէ վնաս:» Ասա. « Արդյո՞ք կույրը համարժեք է տեսնողին : Կամ համարժե՞ք է արդյոք խավարը լույսին : Կամ տվե՞լ եք Ալլահին զուգընկեր , ով արարել է Նրա արարածներից , այնպես , որ յուրաքանչյուրի արարածը համարժեք լինի նրանց :» Ասա. « Ալլահը ամենի Արարիչն է , և Նա Միակն ու Գերակշռողն է :»»** (13 : 16)

2. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՀԱՏ ՊԵՏՔ Է ՎԱԽԵՆԱ ՄԻԱՅՆ ԱՍՏԾՈՑ : Երբ մարդ վախենում է ուրիշներից , նրա կյանքը դառնում է սարսափելի : Սատանան պահում է վախը նրա սրտում : Ալլահն ասաց.

**« Միայն Սատանան է վախեցնում ձեզ իր աջակիցներով : Այսպիսով , մի վախեցեք նրանցից , այլ վախեցեք Ինձանից , եթե դուք իրոք հավատացյալ եք :»** (3 : 175)

3. ՄԱՐԴ ԴԱՌՆՈՒՄ Է ԽԻԶԱԽ և ԱՆՎԱԽ: Ալլահը տալիս է մահ և ժամանակահատված յուրաքանչյուրին երկրի վրա ապրելու համար : Ամենաբարձրյալ Աստվածն ասաց.

**« Եվ հնարավոր չէ մարդ մահանա առանց Ալլահի թույլտվության որոշակի ժամանակում :»** (3 : 145)

Ինչ վերաբերվում է ոչ հավատացյալին, նա կապրի նողկալի կյանք, որովհետև անհավատությունը ոչինչ չի տալիս դժվարին պահերին դիմակայելու : Որքան ճշմարիտ են Ամենաբարձրյալ Ալլահի խոսքերը , որտեղ նա ասաց.

**« Այսպիսով , ում Ալլահը ցանկանում է առաջնորդել , Նա բացում է նրա սիրտը Իսլամի համար և ում Նա ցանկանում է մոլորեցնել , Նա ամուր կապում է նրա սիրտը և ամրացնում է , կարծես նա մագլցում է երկինք: Այսպիսով , Ալլահը տալիս է աղտ նրանց , ովքեր չեն հավատում :»** (6 : 125)

## ԵՐԿՐՈՐԴ ՍՅՈՒՆԸ. ՀԱՎԱՏՔ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՆ

Հրեշտակները անտեսանելի աշխարհից են : Կարելի է հասկանալ նրանց էությունը միայն դիտարկելով այն , ինչ տվել է մեզ Մարգարեն , Աստծո լուսաբանումից : Նրանց միջոցով է տրվել Աստծո Ուղերձը Մարգարեներին և Առաքյալներին երկրի վրա : Պատասխանատու Հրեշտակը Աստվածային Ուղերձի փոխանցման , Գաբրիել Հրեշտակն է : Ամենաբարձրյալ Աստվածն ասաց.

« **Օ, դուք , ովքեր հավատացել եք , հավատացեք Ալլահին, և Նրա Մարգարեներին և Գրքին , որ Նա ուղարկել է Իր Մարգարեների միջոցով և Գրերին , որոնք Նա ուղարկել է առաջ : Եվ , ով չի հավատում Ալլահին , Նրա հրեշտակներին , Նրա գրքերին , Նրա մարգարեներին և Վերջին Օրվան , անկասկած շատ հեռու է գնացել** : » (4 : 136)

## ԵՐՐՈՐԴ ՍՅՈՒՆԸ . ՀԱՎԱՏՔ ԳՐԵՐԻՆ

Այս գրերը պարունակում են կյանքի մեթոդաբանությունը , որը պիտի իրականացնեն հավատացյալները : Երբ մարդիկ իրագործեն Աստծո լուսաբանումը , նրանք , անշուշտ կունենան հասարակական , անհատական և քաղաքական հավասարակշռություն : Աստված ասաց.

« **Ով առաքինի արարքներ է անում , լինի տղամարդ , թե կին , մինչ նա հավատացյալ է , նա անշուշտ կունենա լավ կյանք և Մենք , անկասկած , կտանք նրանց իրենց պարգևը , հետագա կյանքում, ըստ իրենց սովորական դարձած արարքների** :» (16 : 97)

Լավ կյանքը այն, ինչ ներառում է կյանքի քայլերի ընթացքում առաքինի արարքները : Այն կբավարարի հոգին և կպարգևի իրական երջանկություն անհատին : Ամենաբարձրյալ Աստվածն ասաց.

« **Իրոք, նրանք , ովքեր հավատացել են Մարգարե Մուհամեդին (Խ.Ա.Ո.Ն ) և նրա նախորդներին (Խ.Ա.Ո.Ն) , ովքեր հրեա , սաբիացի կամ քրիստոնյա են , և նրանք , այդ մարդկանց միջից , ովքեր հավատացել են Ալլահին և Վերջին Օրվան և բարի արարքներ են գործել , ոչ մի վախ չեն ունենա կապված իրենց հետ , ոչ էլ նրանք կտխրեն** :» (5 : 69)

# ԻՍԼԱՄԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՊԱՐԳԵՎՈՒՄ Է ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իսլամի ուսմունքը մեծ ազդեցություն ունի մեծացող մուսուլմանի վրա: Այն նաև ազդում է նրա վարվելաձևի , էթիկայի, մտածելակերպի և կատարյալ երջանկության վրա : Իսլամի ուսմունքը հեռու է պահում մուսուլմանին նողկալիությունից , ինչպիսիք են շատ դեպքերում հավատք չունեցողները : Մուսուլմանին հրամայված այդ ուսմունքներից են .

1. **ՍԻՐԵԼ ԱԼԼԱՀԻՆ և ՆՐԱ ՄԱՐԳԱՐԵՅԻՆ.**

Ալլահի և մարգարեյի նկատմամբ սերը հրահրում է հավատացյալին տալ ամեն ինչ այդ ուղղում, արժանանալու սիրո : Ինչպես ասվում է ,'' Իրական երջանկությունը անգին է :'' Երջանկության հետամուտ լինելը որոշ մարդկանց դրդել է վատնել շատ գումար , սիրելիներից խրախուսանք ստանալու հույսով : Եթե նրանց հարցնեն , արդյո՞ք այն արժանի է դրան , նրանք կպատասխանեն դրականորեն , քանի որ սերը անգին է և երջանկությունը արժանի է դրան :

Եթե սա կյանքում սիրո հարցն է , ապա Աստվածային սիրո հասնելը պետք է լինի նպատակ, պայքարելու : Աստված ասաց.

**« Եվ , դեռ, մարդկանց մեջ կան այնպիսիներ , ովքեր վերցնում են ուրիշին համահավասար Ալլահին : Նրանք սիրում են նրանց , ինչպես պետք է սիրեն Ալլահին : Բայց , նրանք , ովքեր հավատում են , ամուր են Ալլահի նկատմամբ իրենց սիրով : Եվ եթե, միյան նրանք , ովքեր սխալվել են ենթադրեն , որ , երբ նրանք տեսնեն պատիժը , նրանք համոզված կլինեն , որ ամբողջ հզորությունը պատկանում է Ալլահին և , որ Ալլահը խիստ է պատժի մեջ :»** (2 : 165)

Մարգարեյի ուղեկցորդները շատ էին սիրում Ալլահին և Նրա Մարգարեյին : Երբ ուղեկցորդ Խուբեյբ իբն Ադիին բազմաստվածները բերեցին մահապատժի , նրանք հարցրեցին նրան . « Դու ունե՞ս վերջին ցանկությունը :» Նա ասաց. « Այո, թույլ տվեք աղոթել :» Նրանք թույլ տվեցին նրան աղոթել :

Նա առաջինն էր , ով աղոթեց երկու կքանիստ մահապատժից առաջ : Աղոթքից հետո նա ասաց. « Երդվում եմ Ալլահով, եթե չլիներ իմ մահապատժի փաստը ես կշարունակեյի աղոթել, որպեսզի չստացվեր , որ ես վախենում եմ մահից :» Երբ նրանք մահապատժի էին ենթարկում , հարցրեցին նրան .« Արդյո՞ք դու կցանկանայիր , որ Մարգարե Մուհամեդը լինի քո փոխարեն և դու լինես քո ընտանիքի հետ :» Նա պատասխանեց .'' Երդվում եմ Ալլահով , ես չէի ցանկանա ,

վնասել Մուհամեդին նույնիսկ փշով , մինչ ես ապահով կլինեմ իմ ընտանիքի հետ : »

Նողկալի է նա, ով առավելություն է տալիս իր ցանկություններին, քան Ալլահի և Մարգարեյի սիրուն : Աստված ասաց.

"" **Ասա, O, Մուհամեդ , « Եթե ձեր հայրերը, ձեր որդիները , ձեր կանայք , ձեր բարեկամները , ունեցվածքը , որ դուք ձեռք եք բերել , առևտուրը , որի կորստից դուք վախենում եք և կացարանները , որում դուք գոհ եք ,ավելի սիրելի են ձեզ , քան Ալլահը և Նրա Մարգարեն և ջիհադը , այսինքն պայքարը հանուն Նրա , ապա սպասեք մինչ Ալլահը իրականացնի Իր հրամանը : Եվ Ալլահը չի առաջնորդում հանդգնությամբ աննկազանդ մարդկանց** : »» (9 : 24)

Երբ մարդ սիրում է հանուն Ալլահի և Նրա Մարգարեյի , նա շատ զոհաբերություններ է անում հանուն այդ սիրո հավերժության և հավատացյալը զգում է անսահման երջանկություն : Ամենաբարձրյալ Աստված ասաց.

« **Եվ նաև նրանց համար , ովքեր բնակվում են Տանը , այսինքն Մեդինայում և ընդունել են հավատքը նրանցից առաջ , նրանք սիրում են նրանց , ովքեր արտագաղթել են նրանց մոտ և չեն գտնում որևէ կարիք իրենց սրտերում այնի համար , այսինքն, ինչ տվել են արտագաղթյալներին , այլ տալիս են առավելություն իրենցից , նույնիսկ չնայած, որ նրանք զրկանքի մեջ են : Եվ , ով պաշտպանված է իր հոգու գծուծությունից , նա կլինի հաջողակ** :» (59 : 9)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Մարդ կճաշակի հավատքի 'քաղցրությունը' , երբ ձեռք բերի երեք հատկություն . այն , որ Ալլահը և Նրա Մարգարեն ավելի սիրելի են , քան մյուս արարածները , որ մարդ պիտի սիրի հանուն Աստծո և , որ մարդ պետք է ատի վերադարձը անհավատության այնպես, ինչպես կատի ընկնել հուր Կրակ :»

Այս սիրոնն հասնելը , իրոք մի մեթոդ է , որի միջոցով մարդ կարող է պաշտպանել իրեն դժվարություններից , խնդիրներից և փորձություններից Դատաստանի Օրը : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Յոթ կարգի մարդ կշվաքեն Ալլահի ստվերում , այն օրը , երբ չի լինի ոչ մի ստվեր , բացի Նրա ստվերից : Առաջինը , Արդար ղեկավարը , երիտասարդները , ովքեր մեծացել են Ալլահին երկրպագելով , մարդ , ում սիրտը կապված է Մզկիթի հետ , և երկուսը , ովքեր սիրում են միմյանց հանուն Ալլահի և առանձնացել են դրանում նույնպես, և մարդ , ում ազդեցիկ կինը փորձում է գայթակղել , բայց նա ասում է . «Ես վախենում եմ Ալլահից » և մարդ, ով

**« Եվ պահեք ձեզ համբերատար , լինելով նրանց հետ, ովքեր կոչում են իրենց Տիրոջը առավոտյան և երեկոյան , փնտրելով Նրան: Եվ թող, ձեր աչքերը անցնեն նրանց մոտից, ցանկանալով աշխարհիկ կյանքի հաճույքները և մի հնազանդվեք նրան, ում սիրտը Մենք անհոգ ենք դարձրել Մեզ հիշատակելուց և, ով հետևում է իր ցանկություններին և ,ում գործերը մերժվում են :»** (18 : 28)

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿ. Համբերություն, մարդուն Ալլահի կողմից տրված դժվարությունների ժամանակ : Ալլահն ասաց.

**« Ոչ մի դժբախտություն չի պատահում , բացի Ալլահի թույլտվությամբ : Եվ , ով հավատում է Ալլահին , Նա կառաջնորդի նրա սիրտը : Եվ Ալլահը ամենի Իմացյալն է :»** (64 :11)

Իսլամը հրահանգում է մուսուլմանին համբերատար լինել Ալլահից տրված դժվարությունների ժամանակ : Մենք պիտի ասենք այն, ինչ ասել է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) , երբ հանդիպել է դժվարության .

**«« Մենք պատկանում ենք Ալլահին և Նրան ենք վերադառնալու : O, Ալլահ , պարգևատրիր ինձ այս դժվարության մեջ և տուր ավելի լավ բան :» Երբ մարդ ասում է այս , Ալլահը պարգևատրում է նրան և տալիս է ավելի լավ բան :»»** (Ահմեդ)

19. ՉՊԵՏՔ Է ԲԱՐԿԱՆԱԼ ԿԱՄ ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ ԼԻՆԵԼ. Բարկությունը կառաջնորդի արարքների, որոնց համար կարող են զղջալ : Ալլահն ասաց.

**« Եվ նրանք , ովքեր խուսափում են մեծ մեղքերից և անբարոյականություններից և երբ նրանք բարկացած են , նրանք ներում են :»** (42 : 37)

Ով կարողանում է կառավարել իր բարկությունը , կկարողանա հաղթահարել կյանքի դժվարությունները : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**« Ուժեղը նա չէ, ով կարող է պայքարել ուրիշի հետ , բայց ուժեղը նա է, ով կարող է կառավարել իրեն բարկության պահին :»** (Համաձայնեցված )

20. ԻՍԼԱՄՈՒՄ ՄԵԶ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԵՆ ՆԵՐԵԼ ՍԽԱԼՎՈՂՆԵՐԻՆ. Այս արարքը կտարածի սեր համայնքում : Ալլահն ասաց.

**« Ով վատնում է հանուն Ալլահի , հեշտության և դժվարության պահերին և ով կառավարում է բարկությունը և ով ներում է մարդկանց , և Ալլահը սիրում է բարի արարք անողներին :»** (3 : 134)

Մեզ մուսուլմաններիս, խոսք է տրվել ավելի լավ բան , քան այս ամենը : Մենք պիտի լինենք բարի, երբ մարդիկ չարակամ են : Այս կազատի անհատին

ատելությունից և կլիցնի նրա սիրտը երջանկությամբ և իրական եղբայրության զգացումով: Ալլահն ասաց.

« **Եվ հավասար չեն լավ և վատ արարքը: Ետ մղիր չարիքը արարքով, որը ավելի լավն է և դրանով նրա և քո միջև թշնամությունը կդառնա այնպիսի, կարծես դուք hիավատարիմ ընկերներ եք** :» (41 : 34)

21. ԻՍԼԱՄՈՒՄ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՀՈՒՅՍՈՎ ԼԻ և ՉԿՈՐՑՆԻ ԱՅՆ. Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) օրինակ էր բոլոր մուսուլմանների համար: Մենք պիտի սիրենք լավ նախանշանները և ատենք վատատեսությունը: (Բուխարի )

22.ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է ՏԱԾԵԼ ՎԱՏ ՄՏՔԵՐ ԿԱՄ ԼՐՏԵՍԵԼ ԸՆԿԵՐ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻՆ. Ով հիվանդագին է մտածում մարդկանց մասին, կապրի անհանգիստ կյանք: Նրան կատեն մարդիկ: Ալլահն ասաց.

« **Օ, դուք, ովքեր հավատացել եք, խուսափեք շատ բացասական մտադրություններից: Իրոք, որոշ մտադրություններ մեղք են: Եվ մի լրտեսեք կամ չարախոսեք միմյանց: Արդյո՞ք դուք կցանկանաք ուտել ձեր մահացած եղբոր մարմինը: Դուք նողկանք կզգաք: Եվ վախեցեք Ալլահից, իրոք, Ալլահը ընդունում է զղջում և Գթասիրտ է: Օ, մարդկություն, իրոք, Մենք արարել ենք ձեզ տղամարդուց և կնոջից և դարձրել ենք ձեզ ազգեր և ցեղեր, որ դուք կարողանաք ճանաչել միմյանց: Իրոք, ձեզանից ամենաազնիվը Ալլահի մոտ, ձեզանից ամենաառաքինին է: Իրոք, Ալլահը Իմացյալ և Տեղյակն է** :» (49 : 12-3 )

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) ասաց.

« **Զգուշացեք վատ մտքերից, քանի որ դրանք խոսքի ամենասխալ ձևերն են: Մի լրտեսեք միմյանց և մի ատեք: Եղեք եղբայրներ Ալլահի մոտ** :» (Բայհակի)

## ԼԱՎ ՄՏՔԵՐԻ ՏԱԾՈՒՄԸ.

Իսլամում մուսուլմանը պիտի լավ մտածի իր եղբոր արարքների մասին և չպիտի վերծանի նրա արարքները վատոատեսորեն:

1. ՄԱՐԴ ՊԻՏԻ ՄՈՌԱՆԱ ԱՆՑՅԱԼԸ և ՄՏԱԾԻ ՆԵՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ և ԹՈՂՆԻ ԱՊԱԳԱՄՆ ԱԼԼԱՀԻՆ. Ալլահն ասաց.

«« **Ոչ մի հոգի չասի. « Օh, որքան մեծ է իմ զղջումը այնի համար, ինչ ես արհամարհել եմ կապված Ալլահի հետ և որ ես ծաղրողների մեջ էի:** » Կամ

**չասի. « Եթե միայն Ալլահը առաջնորդեր ինձ, ես կլինեի առաքինիների մեջ:» Կամ, չասի, երբ տեսնի պատիժը. « Եթե ես միայն ունենայի մեկ այլ հերթ, ես կլինեի բարի արարք անողների մեջ:»»** (39 : 56-8)

Հայտնի գրողը գրել է. « Ինչ անցել է չի կարելի ետ բերել, ինչ դուք ցանկանում եք, անտեսանելիի թագավորություն է: Դուք կառավարում եք ամենը ինչ կատարվում է այն ժամին, որտեղ դուք գտնվում եք: Անցյալի մասին մտածելը այն ետ չի բերի և ապագայի մասին մտածելը չի թույլ տա ձեզ անել այն, ինչ պիտի անեք ներկայում:»

2. **ՄԵԶ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԵՆ ՏԱԼ և ՎԱՏՆԵԼ ԱԼԼԱՀԻ ՈՒՂՂՈՒՄ**. Իրոք, երջանկությունը տալու, այլ ոչ թե ստանալու մեջ է: Որևէ լավ բան անելուց հետո, օրինակ կարիքավորին ուտելիք կամ հագուստ տալուց, կամ դժվարության մեջ գտնվողին օգնելուց հետո ինչպե՞ս եք դուք ձեզ զգում: Ալլահն ասաց.

**« Եվ, թող նրանք, ովքեր առաքինի և հարուստ են ձեզանից երդվեն չտալ օգնություն իրենց բարեկամներին և կարքիավորներին և ներգաղթյալներին հանուն Ալլահի և թող նրանք ներեն և չմտածեն: Դու չե՞ք ցանկանա, որ Ալլահը ձեզ ների: Եվ Ալլահը Ներող և Գթասիրտ է:»** (24 :22)

Մեզ զգուշացվել է չպարծենալ նրանով, ինչ մեզ տրվել է, քանի որ այն կործանում է պարգևը և ազատում է մեզ երջանկությունից: Ալլահն ասաց.

**« Օ, դուք ովքեր հավատացել եք, մի ի չիք դանձրեք ձեր բարեգործությունը հիշատակելով այդ կամ վիրավորելով, ինչպես արել է մեկը, ով վատնել է իր ունեցվածքը միայն ցուցադրելու մարդկանց և չի հավատացել Ալլահին և Վերջին Օրվան: Նրա օրինակը նման է մի մեծ հարթ քարի, որի վրա կա փոշի և այն հարվածել է հեղեղը, թողնելով մերկ: Նրանք ի վիճակի չեն պահել որևէ բան իրենց վաստակածից: Եվ Ալլահը չի առաջնորդում անհավատ մարդկանց:»** (2 : 264)

Եթե դու չունես բավական, որ կարողանաս տալ, ապա եղիր բարի քո խոսքերում և ժպտա: Այն, իրոք, ավելի լավ է, քան պարծենալ նրանով, ինչ տրվել է Ալլահի ճանապարհին: Ալլահն ասաց.

**« Բարի խոսքը և ներողամտությունը ավելի լավ է, քան բարեգործությունը, որին հաջորդում է վիրավորանքը: Եվ Ալլահը զուրկ է կարիքից և Հանդուրժող է:»** (2 : 263)

Մուսուլմանը հասարակության մեջ պիտի լինի դրական գործոն , ով միտ հետրում է Ալլահի պատվիրաններին ։ Ուստի , մուսուլմանը պիտի սիրի բարին ուրիշների համար և ատի չարիքը ։ Ալլահն ասաց.

**« Եվ նաև նրանց համար , ովքեր հաստատվել են Տանը , այսինքն Մեդինայում և ընդունել են հավատքը նրանցից առաջ ։ Նրանք սիրում են նրանց, ովքեր ներգաղթել են նրանց մոտ և չեն գտնում որևէ պահանջ իրենց սրտերում այնի, ինչ նրանք տվել են ներգաղթյալներին , այլ գերադասել են իրենցից , չնայած նրանք զրկանքի մեջ էին ։ Եվ ովքեր պաշտպանված են իրենց հոգու գծուծությունից , նրանք կլինեն հաջողակ ։»** ( 59 : 9)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«« Օ, Յազիդ իբն Ասադ, դու կցանկանա՞ս մտնել Ջեննա։ Նա ասաց. « Այո։ » Ապա նա հարցրեց . « Սիրիր քո ընկեր մուսուլմանի համար այն, ինչ սիրում ես քեզ համար ։»** (Հակիմ )

3. ՊԵՏՔ Է ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԲԱՐԻՔԻ և ԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՉԱՐԻՔԻՑ , ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂԱՆԱՆ ԱՊՐԵԼ ԵՐՋԱՆԻԿ ԿՅԱՆՔ . Ալլահն ասաց.

**« Եվ թող ձեզանից մեծանա ազգ , որը կկոչի ամեն բարիքի , կմիանա լավին և կարգելի վատը և նրանք կլինեն հաջողակ ։»** (3 :104)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«« Կրոնը հիմնված է անկեղծ խորհուրդ տալու վրա ։» Մենք հարցրեցինք «Ու՞մ։» Նա պատասխանեց « Ալլահին և Նրա Գրքին , և Նրա Մարգարեյին և մուսուլմանների առաջնորդներին և իրենց հասարակ ժողովրդին ։ »»** ( Մուսլիմ)

4. ՕԳՆԵԼ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ և ՏԱԼ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. Ալլահն ասաց.

**« Եվ նրանք , ովքեր համբերատար են , փնտրում են իրենց Տիրոջը և աղոթում են և վատնում են նրանից, ինչ Մենք տվել ենք գաղտնի և հասարակայնորեն և հատուցում են չարիքը բարիքով , նրանք կունենան լավ հետևանք այս տանը ։»** (13 :22)

5. Պետք է միջամտել ուրիշներին և օգտագործել ազդեցությունը օգնելու , որպեսզի լրացնեն և իրականացնեն գործերը բարի կերպով ։ Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

**« Ով միջամտում է լավ բանի համար , կունենա բաժին , այսինքն , պարգև դրանից և ով միջամտում է չարիքի, կունենա բաժին , այսինքն, բեռ դրանից ։ Եվ Ալլահը ամենի հավերժն և պահապանն է ։»** (3 : 85)

Ամեն անգամ, երբ մարդ գալիս էր Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ խնդրելու որևէ բան, նա ասում էր.

« **Միջամտի քո եղբայրների համար և դու կստանաս պարգև: Ալլահը հոգ կտանի քո գործերի մասին** :» (Բուխարի)

6. ՊԵՏՔ Է ԲԱՐԻՔ ԱՆԵԼ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՄԵՆ ՁևՈՎ. Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« **Ալլահին ամենասիրելի են նրանք, ովքեր ամենաօգտակարն են ուրիշներին: Ալլահի համար ամենասիրելի արարքը ուրիշ մուսուլմանին երջանկացնելն է, կամ ,երբ մուսուլմանը ազատում է նրան դժվարությունից, կամ օգնում է վճարել պարտքերը, կամ կերակրում է քաղցածին: Որևէ մեկին օգնելը ավելի հաճելի է ինձ, քան մեկ ամիս մզկիթում Իթիկաֆ անելը: Ով կառավարում է իրեն բարկության պահին, Ալլահը պաշտպանում է նրան: Ով կառավարում է իր բարկությունը այն ժամանակ, երբ կարող է ցավ պատճառել կամ վնասել որևէ մեկին, Ալլահը լցնում է նրա սիրտը երջանկությամբ Հարության Օրը: Իրոք, չար վարվելաձևը կոչնչացնի լավ արարքները, ինչպես քացախը կփչացնի մեղրը** :» (Թաբրանի )

Երբ մարդը պայքարում է տարածել Իսլամ, նա լինում է աննկարագրելի երջանիկ: Երբ մարդ փրկում է մեկ ուրիշին Դժոխքի տանջանքից, ունենում է հոյակապ զգացում: Ուղեկցորդներից մեկը ասաց Ռոստոմին, պարսկական թագավորին, երբ նա հարցրեց թե առաջինը ինչու է եկել իր երկիրը, նա պատասխանեց. « Մենք եկել ենք ազատելու մարդկանց երկրպագելու արարածներին, այնպես որ նրանք կարողանան երկրպագել արարչին: Մենք եկել ենք ազատելու մարդկանց այս կյանքի սահմանափակումներից և խստություններից, այնպես, որ նրանք հասկանան, որ հետագա կյանքը փաստացի է: Մենք եկել ենք ազատելու նրանց բոլոր հավատքների ճնշումից, դեպի արդար Իսլամ:» Ալլահն ասաց.

« **Եվ մարտնչիր նրանց դեմ, մինչ չկա ֆիտնա և մինչ կրոնը, այսինքն երկրպագությունը, ամենը Ալլահի համար է: Եվ, եթե նրանք դադարեն, ապա, իրոք, Ալլահը Տեսնող է, թե ինչ են նրանք անում** :» (8 : 39)

Ալլահի ուղղում բարեգործություն տալը չի վերաբերվում միայն մուսուլմաններին: Մարգարեն Խ.Ա.Ո.Ն, նույնպես տրվում է ոչ մուսուլմաններին :

«« **Անաս իբն Մալիքը ասաց, որ Ալլահի Մարգարեյին չէին խնդրում որևէ բան և նա տալիս էր: Մի մարդ, ով ընդունեց Իսլամ, վերադարձավ իր մարդկանց մոտ**

**և ասաց նրանց. « Օ, մարդիկ, ընդունեք Իսլամ, քանի որ, իրոք, Մուհամեդը տալիս է ինչպես մի մարդ, ով չի վախենում աղքատությունից:»»** (Իբն Խուզեյմա)

## ՉՈՐՐՈՐԴ ՍՅՈՒՆԸ. ՀԱՎԱՏՔ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻՆ.

Նրասնք այն մարդիկ են, ում մենք պիտի նախանձենք: Մարդ կգիտակցի Ալլահին կամ կհասնի երջանկության նրանց միջոցով: Իմամ Իբն ալ Քայումը, իր Զաադ ալ Մաադ գրքում ասաց.

« Կապված նրա հետ, ինչ կապաքինի սրտերը, այն է ,ինչ Մարգարեները հասցրել են: Սրտերը կլավանան միայն իմանալով իրենց Արարչին և պայքարելով բարիք անելու և խուսափելով անօրինականից, ինչը բարկացնում է Ալլահին: Սիրտը չի կարող առողջ լինել առանց դրա: Եվ այդ ամենից ոչինչ հայտնի չի լինի. առանց Մարգարեների ուղերձի: Նա, ով կարծում է, որ կարող է հասնել առողջ դիրքի առանց առաջնորդությանը հետևելու, որը տրվել է նրանց կողմից, իրոք, հիմար է: Նրանք կապրեն կենդանական կյանք, հետևելով իրենց ցանկություններին և իղձերին: Նա, ով չի կարող տարբերակել այս երկու վիճակները, ունի անկյանք սիրտ:»

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍՅՈՒՆԸ. ՀԱՎԱՏՔ ՎԵՐՋԻՆ ՕՐՎԱՆ

Երբ մարդ հավատում է Վերջին Օրվան և որ, մարդիկ հարություն կառնեն և հետո կպարգևատրվեն կամ կպատժվեն, հանգստություն կզգա և համոզված կլինի, որ եթե նա ճնշված է այս կյանքում և չի կարողանում վերկանգնել իր իրավունքները, ապա Ալլահը կտա այդ նրան Հետագա կյանքում: Հետագա կյանքում վճարը գումարը չէ, այլ արարքները: Մարգարեն Խ.Ա.Ո.Ն ասաց իր ուղեկցորդներին.

**«« Դուք գիտե՞ք, թե ով է սնանկը:» Նրանք ասացին. « Նա է, ով չունի գումար:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց. « Սնանկը նա է, ով գալիս է իմ ազգից մեծ արարքներով, աղոթքներով, բարեգործությամբ, պահքով, բայց սխալված այնքան, որ տալիս է ամեն մեկին իր լավ արարքներից, մինչ ամբողջը ավարտվում է: Նա, ապա վերցնում է նրանց մեղքերը և հետո նետվում է Դժոխք:»»** (Մուսլիմ)

Փոխհատուցումը և հավետվությունը միայն մարդկանց մեջ չէ, այն վերաբերվում է նաև կենդանիներին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« **Իրավունքները կտրվեն իրենց ճիշտ տերերին: Ոչխարի իրավունքը, որին խժռել է խոյը, նույնպես կտրվի** :» (Իբն Հիբան)

Երբ մարդ հավատում է Վերջին Օրվան, նա չի զգում անհարմարություն, երբ ի վիճակի չի լինում հասնել որևէ բանի իր կյանքում, քանի որ, լավագույն բաները սպասում են իրեն Երկնքում:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց, որ Ալլահն ասաց.

« Ես պատրաստել եմ Իմ հավատացյալ ստրուկների համար, այն, ինչ ոչ մի աչք չի տեսել, ոչ մի ականջ չի լսել և ոչ մի միտք չի մտածել:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) այնուհետ, ասաց.

« Կարդա, եթե դու ցանկանում ես:»

«**Եվ ոչ մի հոգի չգիտի ինչ է թաքնված նրանց համար որպես աչքի հարմարություն, այսինքն, բավարարվածություն, ինչպես պարգև, այն բանի համար, ինչ նրանք սովոր են անել** :» (32 : 17)

Երբ հավատացյալը հանդիպում է դժվարության, նա համբերատար դիմակայում է, իմանալով, որ այն փորձություն է Ալլահից: Բոլոր ցավերը, որ նա տարել է, կմոռացվի անմիջապես, երբ նա մտնի Դրախտ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«« **Ամենահարուստը, ամենաօրհնված անձը այս կյանքում, կբերվի առաջ և կնետվի Դժոխք և հետո դուրս կտարվի, և հետո կհարցնեն. « Օ, Ադամի որդի, դու տեսե՞լ ես որևէ լավ բան քո կյանքում :» Նա կասի. «Ոչ, Ալլահ:» Հետո ամենանողկալի մարդը այս կյանքում, կբերվի և կնետվի Դրախտ և հետո կհարցնեն. « Դու վկ՞ ես եղել որևէ դժվարության :» Նա կասի. « Ոչ, Ալլահ:»»** (Մուսլիմ)

Այս հավատքը կդրդի մուսուլմանին պայքարել բարիք անելու:

## ՎԵՑԵՐՐՈՐԴ ՍՅՈՒՆԸ. ՀԱՎԱՏՔ ԿԱՆԽՈՐՈՇՄԱՆԸ

Մենք հավատում ենք, որ ինչ պատահում է մեզ կանխորոշված է Ալլահից և դժվարությունից կամ բարիքից ինչ չի եկել մեզ, երբեք չի գա, եթե Ալլահը չի կանխորոշել այն մեզ: Ալլահն ասաց.

**« Ոչ մի աղետ չի հարվածում երկիրը կամ մեզ , բացի այն դեպքից, երբ այն գրվել է , մինչ Մենք իրականացրել ենք , իրոք, այդ հեշտ է Ալլահի համար : Որպեսզի , դուք չհուսահատվեք նրա համար ինչ հասել է ձեզ և չհրճվեք , պարծենկոտությամբ , նրա համար , ինչ Նա տվել է ձեզ : Եվ Ալլահը չի սիրում ինքնավստահներին և պարծենկոտներին :»** (57 : 22-3)

Մարգարեն( Խ.Ա.Ո.Ն ) ասաց.

**« Օ, երիտասարդներ, ես կսովորեցնեմ ձեզ որոշ խոսքեր, խորհուրդներ . Մի մոռացեք Ալլահին և Ալլահը կպաշտպանի ձեզ : Եթե դուք խնդրում եք , խնդրեք Ալլահին միայն և , եթե դուք օգնություն եք փնտրում , ապա փնտրեք օգնություն միայն Ալլահից : Եվ իմացեք, որ եթե Ազգը միասին հավաքվի օգնելու քեզ , նրանք չեն օգնի քեզ, բացի այն բանով , ինչ Ալլահը արդեն կանխորոշել է քեզ համար : Եվ , եթե նրանք հավաքվեն միասին վնասելու քեզ որևէ բանով, նրանք չեն վնասի քեզ, բացի այն բանով , ինչ Ալլահն է արդեն կանխորոշել : Գրիչները վերցվել են և Էջերը չորացվել են :»** (Հակիմ )

Ճակատագրի հանդեպ հավատքը մարդուն կերջանկացնի և կդնի նրա սիրտը հեշտության մեջ : Չպետք է տխրել կամ զայրանալ կորցրած հնարավորությունների համար : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«« Ամուր հավատացյալը ավելի լավ է և ավելի սիրելի Ալլահին, քան թույլ հավատացյալը և երկուսի մեջ էլ կա բարիք : Զգուշացեք անել այն, ինչ շահավետ է ձեզ և մի հուսահատվեք : Իրոք, այն ինչ պատահել է ձեզ , դուք չեիք կարող խուսափել , այսպիսով մի ասեք. « Եթե ես անեյի այսպես կամ այնպես:" Քանզի , «Եթե» բառը բացում է սատանայի դարպասները :»»** ( Մուսլիմ )

Չպետք է հուսահատվել կորած հնարավորությունների համար : Եթե մենք վերցնենք պահը և նայենք ընդհանուր տկարություններին , պարզ կլինի , որ ախտերի մեծամասնությունը տարածվում է անհանգստություններից : Այլ կերպ ասած , դրանք ուղղակի կամ անուղակի արդյունք են այս սյան անհավատության : Երբ մարդ հավատում է այս սյանը լիովին , նա, Ալլահի օգնությամբ , կկարողանա հաղթահարել իր անհանգստությունները և մտորումները :

## ՎԱԽԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԴՐԱ ԲՈՒԺՈՒՄԸ.

Վախը , անհանգստությունները և մտորումները ունեն դեր և բուժում Իսլամում : Մարդ կարող է վախ կրել որոշակի բանից , կապված տարբեր գործոնների հետ :

Ա. Վախ, չունենալու բավարար պաշարներ: Ալլահն ասաց.

« **Եվ երկնքում է քո պարենը և ինչ քեզ խոստացվել է** :» (51 :22)

Ալլահն ասել է ճշմարտությունը : Իրոք, երկնքում կան պաշարներ մարդկանց համար : Օրինակ , անձրև է գալիս և բուսականությունը ծաղկում է : Մարդիկ օգուտ են ունենում անձրևաջրից ուղղակիորեն : Ալլահը խոստացել է հոգալ յուրաքանչյուր անհատի պարենը : Ալլահն ասաց.

« **Չկա արարած երկրի վրա , ում պարենը Ալլահի մոտ չէ և Նա գիտի դրա բնակության վայրը և պաշարման տեղը : Ամենը պարզ գրանցված է** : » (11: 6)

Կապ չունի , թե որքան թույլ է արարածը, նրա պարենը որոշված է Ալլահից նրա համար : Ալլահն ասաց.

« Եվ որքան արարածը չի կրում իր պարենը : Ալլահը տալիս է դրա և քեզ համար : Եվ Նա Լսող և Իմացող է :» (29 : 60 )

Ալլահը դիմեց Մարիամին , մինչ նա թույլ էր:

« **Եվ թափահարիր արմավենու ճյուղը , այն կտա քեզ հասուն , թարմ պտուղներ** :» (19 : 25)

Ալլահը տվեց նրան ոչ միայն արմավի պտուղներ, այլ թարմ պտուղներ : Ամենը , ինչ նա պիտի աներ , ծառը թափահարելն էր և պտուղները ընկան նրան մոտ :

Ալլահը տալիս է նաև կենդանիներին: Նրանք հեշտորեն գտնում են գոյատևելու ձևեր , որտեղ էլ որ լինեն : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) ասաց.

« **Եթե դուք կախված լինեիք Ալլահից իրականում , ինչպես պետք , Նա կմատակարարեր ձեզ ինչպես Նա մատակարարում է թռչուններին : Նրանք հեռանում են իրենց բներից դատարկ ստամոքսներով և վերադառնում են լի ստամոքսներով** : » (Իբն Մաջահ )

Շատերը հակված են վստահել Ալլահին սխալ ձևով : Որպեսզի այն ճիշտ լինի , պետք է կատարվի պարտքը : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« **Թող քո ուղտը քայլի ազատ և վստահիր Ալլահին** :» **Բայց նա ասաց.** « **Կապիր քո ուղտը և վստահիր Ալլահին** :» (Իբն Հիբան )

Շատ անգամ , ոմանք արհամարհում են այս և ուղղակի ցանկանում են պաշարների հայտնվելը կախարդական ձևով ։ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն )ասաց.

« **Եթե ձեզանից մեկը ստիպված լինի վաճառել վառելափայտ, այդ ավելի լավ կլինի քան ողորմություն խնդրելը** ։» (Բուխարի)

Այստեղից մենք հասկանում ենք , որ պիտի պայքարենք հասնելու պարենի , որը գրված է մեզ Ալլահից ։ Չպետք է վախենալ , որ մեկը կարող է խանգարել ստանալու պարենը , քանի որ Ալլահը ասաց.

«« **Ասա նրանց . « Եթե դուք տնօրինում եք Ալլահի ողորմածությունից , ապա չպիտի վախենաք վատնելուց ։» Եվ երբևէ մարդը եղել է գծուծ** ։»» (17 : 100)

Բ. Վախեցեք վնասող բաներից , ինչպիսիք են տկարությունը և թշնամությունը , որը կարող է հասնել մարդուն ։ Անկախ նրանից , թե որքան է մարդ անհանգստանում դրա համար , այն չի փոխի էությունը ։ Հակառակը, այն ավելի կվատթարացնի նրա իրավիճակը ։ Ալլահն ասաց.

« **Եվ, եթե Ալլահը քեզ տալիս է ձախորդություն , չկա այն հեռացնող , բացի Նրանից և , եթե Նա մտադրվել է քեզ համար բարիք , ապա , չկա մերժող Նրա պարգևի: Նա պատճառ է հանդիսանում հասնել նրան, ում Նա է ցանկանում Իր ստրուկներից ։ Եվ Նա Ներող և Գթասիրտ է** ։» (10 : 107 )

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« **Հոյակապ է , իրոք, հավատացյալի գործերը , նրա բոլոր գործերը լիարժեք լավ են նրա համար և այս միայն հավատացյալի համար ։ Երբ նա օժտվում է օրհնությամբ , նա շնորհակալ և երախտապարտ է Աստծոն և դա լավ է նրա համար և երբ, նրան է հասնում դժվարություն , նա համբերատար է և այդ լավ է նրա համար** ։» (Մուսլիմ)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հրահանգեց , որ մենք ընդունենք դժբախտությունները , որոնք հասել են մեզ և փորձենք մեղմել դրանք ։

Մեկ ահգամ, երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) գնաց այցելելու իր թոռանը , արցունքներ թափեց ։ Աստծո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նստեց նրա մահվան մահճի մոտ ։ Երեխայի աչքերը սառած էին ինչպես քարեր ։ Տեսնելով այդ, Աստծո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ողբաց: Սաադը ասաց նրան . « **Ի՞նչ է պատահել Օ, Աստծո Մարգարե:» Նա ասաց. « Այս գութն է , որ Ամենաբարձրյալ Աստվածը դրել է Իր ստրուկների սրտերը ։ Իրոք, Աստված գթասիրտ է նրանց , ովքեր գթասիրտ են ուրիշների նկատմամբ** ։» (Բուխարի )

Համբերությունը պահանջվում է մուսուլմանից և , ով հիվանդանում է , պետք է փնտրի բժշկական օգնություն : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Փնտրեք բժշկական օգնություն, Օ, Ալլահի ստրուկներ , քանի որ , իրոք, Ալլահը չի տվել ախտ, առանց նրա բուժման :» (Իբն Հիբան)

Պետք է զգույշ լինել որպեսզի չփնտրել բժշկական օգնություն անթույլատրելի աղբյուրներից : Աբու Հուրեյրան , թող Ալլահը գոհանա նրանով , ասաց.

« **Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) արգելեց օգտագործել դեղամիջոց անթույլատրելի աղբյուրներից** : » (Հակիմ )

Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« **Յուրաքանչյուր ախտ ունի բուժում , նրանք , ովքեր արհամարհում են բուժումը , կարհամարհվեն դրանից , և նրանք , ովքեր գիտեն այդ , կիմանան այդ** :» (Իբն Հիբան)

Գ. Վախեցեք մահից : Այս իրականություն է, որը բոլորը կփորձեն : Ալլահն ասաց.

« **Բոլորը երկրի վրա կանհետանան և կմնա ձեր Տերը , Մեծության և Պատվի Տիրակալը** :» (55 : 26)

Ոչ ոք չի կարող խուսափել մահից : Ալլահն ասաց.

«« **Ասա. « Իրոք, մահը , որից դուք փախչում եք , անշուշտ կհանդիպի ձեզ : Հետո , դուք կվերադառնաք անտեսանելիի և անվկայի Գիտակին և Նա կտեղեկացնի ձեզ , թե ինչ եք դուք սովորաբար արել** :»» (62 : 8)

Ինչի մասին մարդ պիտի անհանգստանա, դա թե ինչ կլինի մահից հետո, ոչ թե մահը : Փորձելով կանխարգելել մահը կամ գտնելով բուժումը , ապարդյուն է : Ալլահն ասաց.

« **Եվ ամեն ազգի համար այն որոշակի ժամանակ է : Այսպիսով , երբ նրանց ժամանակը գալիս է , նրանք չեն մնա ոչ մի ժամ , ոչ էլ կնախորդեն այն** :» (7 : 34)

Ով վախենում է մահից , ունի թույլ հավատք կամ չունի ընդհանրապես : Երբ մարդ հավատում է Վերջին Օրվան , Հարությանը և Հաշվին , անշուշտ թեթևություն է զգում : Մարդ , ով հավատում է մահվան , կաշխատի լավացնել իր վիճակը մահից հետո և այսպիսով , նա կդառնա հասարակության դրական անդամ : Նա չի տխրի հնարավորությունների համար , որոնք անցել են կամ

կեղեքողների կեղեքումից , քանի որ բոլորը հաշվի կբերվեն Ամենաբարձրյալ Ալլահին :

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Իսլամին այս հակիրճ հայացքից հետո , եթե դուք հարցնեք ինձ , արդյոք ես համոզված եմ նրա հավաստիությանը , ես կպատասխանեմ դրականորեն : Պատճառը այն է , որ ես գտել եմ պատասխան բոլոր հարցերին , որ գալիս են իմ մտքին : Ես չեմ գտել դրանք անտրամաբանական և ես թեթևացած եմ և հանգիստ եմ իմ հավատքով , որը ներառում է Ալլահի հանդեպ հավատքը , լավ արարքները և անօրինականություններից խուսափելը : Դրա հետ միասին , ես կարող եմ ունենալ իմ իրավունքները և գտնել , որ ուրիշների իրավունքները պահպանվում են : Այստեղ , ես գտնում եմ , որ Ալլահը կոչում է բարիք գործել , հետևել էթիկայի կանոններին և հեռու մնալ ամեն անէթիկ բաներից : Եթե քո հավատքը չի տալիս քեզ այս ամենը , ապա դու պիտի փնտրես ավելի լավը :

Արդյո՞ք դուք գիտեք թե որն է լավագույն հավատքը : Այն Իսլամն է : Ես համոզված եմ , որ ոմանք կասեն . « Դու մուսուլման ես և դու փորձում ես գովազդել քո հավատքը : » Բայց եթե ես տեղեկացնեմ ձեզ, որ ոչ միայն մուսուլմաններն են քարոզում այս , այլև ոչ մուսուլմանները, ապա ի՞նչ կասեք դուք դրան : Գոյություն ունեն շատ արևմտյան հեղինակներ, ովքեր արդար են եղել Իսլամի նկատմամբ իրենց մոտեցմամբ և արժանապատվորեն են խոսել դրա մասին :

Մորիս Գոդեֆրոյը ասաց. « Մուհամեդը մարգարե էր , ոչ թե աստվածաբան , փաստը այնքան ակնհայտ է , որ մարդ դժկամ է հաստատել այդ : Մարդիկ , ովքեր շրջապատել են իրենց և սահմանադրել են զահերեց Մուսուլմանական համայնք, բավարարվում են ենթարկվելով օրենքին , որ հայտարարված է Ալլահի անունով և հետևում են օրինակին և ուսմունքին :» [14]

Վոշինգտոն Իրվինգը [15] ասաց. « Նրա ռազմական հաղթանակները կարթնացնեյին պարծենկոտություն , և սին փառք , եթե կատարված լինեյին անձնական նպատակներով : Այդ հոյակապ իշխանության ժամանակ , նա ուներ նույն պարզ վավելակերպը և տեսքը , ինչպես ձախորդությունների ժամանակ : Այսպես,

[14] Իբիդ
[15] Նա հայտնի գրող էր : Նա մահացավ 1859 թվականին :

ազդեցություն ունենալով , նա դժգոհում էր , երբ մտնելով սենյակ հանդիպում էր որևէ անսովոր հարգանքի իր հանդեպ :»[16]

Էդմունդ Բրուկը ասաց. « Մուհամեդական օրենքը , որը կապ էր թագադրվածների և ամենահասարակ մարդկանց միջև, միահյուսված ամենաիմաստուն և գիտակ համակարգ է, երբևէ աշխարհում գոյություն ունեցած օրենսդրական համակարգերից :» [17]

Ջ. Մարգոլիութը ասաց.

« Ղուրանը գրավում է կարևոր դիրք աշխարհի հզոր կրոնների մեջ : Չնայած երիտասարդ դարաշրջանի պատրաստված աշխատանքների , որոնք պատկանում են այս տեսակի գրականությանը, այն հազիվ թե զիջի որևէ հոյակապ ազդեցության , որը եղել է մարդկությանը : Այն կերտել է ամբողջական և նոր փուլ մարդկային մտածելակերպում և թարմացում էության տեսակին :» [18]

Այժմ , լինելով անկեղծ, ինչու՞ դուք չեք ընդունում Իսլամ ,ինչպես ձեր հավատք:

Պատճառը այն , որ այն կոչում է Միաստվածությա՞ն:

Որովհետև այն կոչում է մարդկանց երկրպագել միայն Ամենաբարձրյալ Աստծո՞ն:

Որովհետև այն կոչում է մարդկանց հետևել ամեն տեսակի էթիկ նորմերի՞ն:

Որովհետև այն կոչում է մարդկանց լինել արդար և խուսափել անարդարությունի՞ց :

Որովհետև բոլոր մարդիկ հավասա՞ր են Ալլահի տեսանկյունից :

Որովհետև բոլոր մարդիկ կստանան իրենց արժանի բաժինը և բոլոր իրավունքնե՞րը:

Այն պահից սկսած , երբ Իսլամը հաստատվել է 1400 տարի առաջ և մինչ օրս , մարդկանց քանակը , ովքեր ընդունում են այդ աճել է : Նա, ով ընթերցում է այդ առանց նախախնամությունների և բաց մտքով , անշուշտ համոզվում է և ընդունում է Իսլամ: Եթե նա չի ընդունում , ամենաքիչը չի ցուցադրում թշնամություն :

Նայեք մեր այժմյան դրությանը , ամբողջ ճնշումներով և խնդիրներով , որոնք հասել են բոլոր երկրների մուսուլմաններին , նրանք ամուր կանգնած են իրենց

[16] Աֆզալուր Ռահմենի Սիրայի հանրագիտարան
[17] Իբիդ
[18] Ջ. Մարգոլիոթ. Ներածություն Ջ. Մ. Ռոդվելի ' Ղուրան ' գրքին: Ամեն մարդու Գրադարան .1977

հավատքում ։ Սովետական Միությունում , մուսուլմանները ճնշվել են յոթանասուն տարի։ Նրանց մզկիթները ոչնչացվել են, նրանց անունները փոխվել են , և նրանց արգելվել է բացահայտ իրականացնել իրենց հավատքը , մինչ Սովետական Միության փլուզումից հայտնվեցին շատ իսլամական երկրներ ։ Ի՞նչ է այդ ապացուցում։ Արդյո՞ք այն չի ապացուցում , որ մուսուլմանները բավարարված , երջանիկ և հաստատուն իրագործում են իրենց հավատքը։

Նա, ով արդար է և փնտրում է ճշմարտություն , անկասկած ոչ մի տարօրինակ բան չի գտնի Իսլամի ուսմունքում ։ Այն կոչում է մարդկանց հետևել համապատասխան վարվելաձևի , լինելու ավելի լավը և կատարելագործվելու: Ճշմարտության որոշ փնտրողներ, անշուշտ անցել են համարյա բոլոր կրոնները , բայց չեն փորձել իսլամը ։ Ես չգիտեմ , թե ի՞նչն է կանգնեցրել նրանց ։ Շատ հավանական է , որ նրանք գտնեն իրենց երջանկությունը այնտեղ ։ Կան ժամանակներ , երբ մարդ պիտի կատարի համարձակ որոշում , որը պիտի անդրադառնա նրա ապագային ։ Գոյություն ունի երկու տարբերակ, կամ դու ընդունում ես և հասնում ես երջանկության , կամ չես ընդունում և մնում ես այնպես ինչպես կաս: Հարցրեու քեզ ինչու՞ է իսլամը հարձակման ենթարկվում անընդհատ տեղեկատվության ոլորտում ։ Ասվում է ․ «մարդը թշնամի է նրան, ինչին տեղյակ չէ» այսպիսով , մի ցուցադրեք թշնամություն այնին , որը դուք արհամարհում եք ։

## ՔԱՅԼԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ճշմարտությունը ընդունելու առաջին քայլը ասվածը օբյեկտիվորեն լսելն է ։ Խնդրեք Աստծոն օգնել և առաջնորդել ձեզ ։ Երբ Աստված տեսնի ցանկություն ձեր մեջ հասնելու ճշմարտության , Նա կառաջնորդի ձեզ ։ Նա ասաց.

**«« Եվ ձեր Տերը ասաց. « Կոչեք Ինձ , Ես կպատասխանեմ ձեզ ։» Ի՞րոք , նրանք , ովքեր քամահրում են Իմ երկրպագությունը , կմտնեն Դժոխք ցուցաբերված արհամարհանքով** ։»» (40 ։ 60)

Հարցրու քեզ , թե ինչու՞ այսքան շատ արևմտյան գրողներ , մտածողներ և գիտնականներ և անհատներ ընդունում են Իսլամ ։ Պատճառը պարզ է « Երբ նրանք տեսնում են Իսլամի ամբողջականությունը և գեղեցկությունը , կարդում են դրա մասին և դառնում են առանց բացասական տեղեկատվության ազդեցության , նրանք որոշում են ընդունել Իսլամը, ինչպես իրենց հավատք ։ Այնուհետ , նրանք զգում են իրական երջանկություն իրենց կյանքում ։ »

Արևմուտքի որոշ մարդիկ կարդում են Իսլամի մասին, հասկանում են , բայց չեն ընդունում : Նրանք իրականությունն են ասում Ղուրանի և Իսլամական հավատքի մասին : Թոմաս Կարլայլը օրինակ է : Նա ասաց. « Կեղծ մարդը գտա՞վ կրոնը : Ինչու , կեղծ մարդը չի կարող կառուցել քարե տուն : Եթե նա չգիտի և հետևում է հավանգի հատկություններին, այրում է կավը կամ այն ինչով նա աշխատում է , ապա այն տուն չէ, որ նա կառուցում է , այլ աղբակույտ : Այն կանգուն չի մնա տասներկու դար , դնելու հարյուր և ութ միլիոն , այն անմիջապես կընկնի : Մարդ պետք է իրեն հաստատի Բնության օրենքներին, համագործակցի բնության և իրերի ճշտության հետ , կամ բնությունը կպատասխանի նրան : Ոչ, բոլորովին : Հատուկները հատուկ են , ահ, ինձ , Կագլիոստրոն , շատ Կագլիոստրոներ , հայտնի աշխարհի ղակավարներ , բարգավաճում են իրենց խաբեությամբ մեկ օր : Այն նման է կեղծ թղթադրամի , նրանք անց են կացնում այն իրենց անիմաստ ձեռքերով, մյուսները , ոչ նրանք ,խելացի են վերաբերվում դրան :

Բնությունը բռնկվում է հուր կրակներով, Ֆրանսիական Հեղափոխությունները և դրա նմանները , հայտարարում են սարսափելի տարբերություն , որ կեղծ դրամները կեղծ են : Բայց Մեծ մարդիկ, մանավանդ նրա նման , ես կպնդեմ , ավելի քան ճիշտն են : Ինձ թվում է , որ նրա հիմնական հիմքը և դրա նման կարող են նրա մեջ դնել այս :» [19]

Հայտնի դրամատուրգ և քննադատ Ջորջ Բեռնարդ Շոուն ,1950թ. , ասաց. « Ես միշտ բարձր եմ դասել Մուհամմեդի կրոնը , իր հոյակապ կենսունակության շնորհիվ : Այն միակ կրոնն է , որը ունի այն ունակությունները դիմակայելու ամեն դարաշրջանի , ես մարգարեացում եմ անում Մուհամմեդի հավատքին , որ այն վաղը կլինի ընդունելի , ինչպես ընդունելի սկիզբ , այսօրվա Եվրոպայի համար : Միջնադարյան հոգևորականության, կամ մոլեռանդության և արհամարհանքի շնորհիվ Մուհամմեդանիզմը նկարագրվել է մուգ գույներով : Փաստորեն ,նրանց վարժեցրել են ատել և մարդ Մուհամմեդին, և նրա կրոնը : Նրանց համար Մուհամմեդը հակա- Քրիստոսն էր : Ես ուսումնասիրել եմ նրան , հոյակապ մարդուն և իմ կարծիքով , նա հեռու է հակա- Քրիստոս լինելուց , Նրան պիտի կոչեն մարդկության փրկիչ :» [20]

Ալլահն ասաց.

**« Իրոք, Օ, Մուհամմեդ, դու չես առաջնորդում ում դու ես ցանկանում , բայց Ալլահը առաջնորդում է , ում Նա է ցանկանում : Եվ , Նա ամենագիտակն է ճիշտ առաջնորդվածների** :» (28 :56)

---

[19] Հերոսները, Հերոսների երկրպագությունը և Հերոսական պատմությունները :
[20] Սիրահի հանրագիտարան , Աֆզալուր Ռահմանից.

Չպետք է կորցնել հույսը և ասել. « Ես նրանցից եմ , ովքեր չեն առաջնորդվի :» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**« Իրոք, ձեզանից ամեն մի արարած միացվել է մոր արգանդում քառասուն օր նութֆայի , կաթիլի, ձևով , հետո նա դարձել է ալաքա ,արյան լերդացում , նմանատիպ ժամանակահատված, հետո մուղգաh , մարմին , նմանատիպ ժամանակահատված , հետո նրան է ուղարկվել հրեշտակ , ով փչել է իր հոգին նրա մեջ և ում հրամայված է չորս բան . գրառել նրա գոյությունը , նրա կյանքի ուղղին , արարքները և արդյոք նա կլինի երջանիկ , թե ոչ, այսինքն, արդյոք նա կմտնի Դրախտ, թե ոչ : Նրանով , որից բացի չկա ուրիշ աստվածություն, իրոք, ձեզանից մեկը արարքներ է անում Դրախտի մարդկանց նման , մինչ կա տարածություն թևի երկարությամբ , նրա և դրա միջև, և ինչ գրառվել է գերազանցում է նրան և այսպիսով , նա գործում է Դժոխքի մարդկանց արարքներ և այսպիսով մտնում է այնտեղ, և իրոք, ձեզանից մեկը գործում է արարքներ Դժոխքի մարդկանց նման , մինչ կա թևի երկարությամբ տարածություն նրա և դրա միջև և ինչ գրառվել է գերազանցում է նրան, այսպիսով , նա գործում է Դրախտի մարդկանց նման և այսպիսով, նա մտնում է այնտեղ** :» (Բուխարի )

Շատ արևելագետներ , ովքեր ուսումնասիրել են Իսլամը պախարակելու , վերջում ընդունում են այն : Դեբորահ Փոթերը[21] ասաց. « Իսլամը, որը Աստծո Օրենք է , ակնհայտ է բնության մեջ մեր շրջապատում : Լեռները , օվկիանոսները , մոլորակները և աստղերը պտտվում են ուղեծրի շուրջ , Ալլահի հրամանով : Նրանք ենթարկվում են Ալլահի հրամանին , իրենց Արարչի , ինչպես պատմության կերպարներ և Ալլահինն է լավագույն օրինակը : Նրանք չեն խոսում կամ գործում , անում են այն , ինչ հեղինակն է որոշել : Այսպես , տիեզերքի ամեն մասնիկ , հնազանդության վիճակում են :

Ամեն դեպքում մարդիկ բացառություն են կանոնից, քանի որ Ալլահը տվել է նրանց ընտրության ազատություն : Նրանք ունեն ընտրություն հնազանդվելու Ալլահի հրամանին , կամ տալու իրենց օրենքները և Կրոնը ըստ ցանկության : Դժբախտաբար , նրանք ընտրում են երկրորդ տարբերակը , շատ ժամանակ : Մարդիկ Եվրոպայում և Ասիայում մեծ քանակությամբ ընդունում են Իսլամ , որովհետև նրանք մտքի հանգստության և հոգևոր ապահովության քաղցի մեջ են : Նույնիսկ , շատ Քրիստոնյա արևելագետներ և կրոնականներ, ովքեր աշխատում են ոչնչացնել Իսլամը և դուրս բերել թերությունները , իրենք են դառնում

---

[21] Ծնված 1954 թվականին Թրավեռս քաղաքում, Միչիգանում , նա ավարտել է Միչիգանի համալսարանը , լրագրող մասնագիտությամբ : Վերցրած Իմադ ուդ Դեեն Խալիլի « Ինչ են ասում Իսլամի մասին» գրքից:

մուսուլմաններ ։ Այս կատարվում է այն պատճառով , որ իրականության վկայությունը որոշիչ է, ելք չկա հերքելու այն ։»

Բոլոր այսօրվա հավատքները բացի Իսլամից, ունեն պարսավելի արարքներ և հրամաններ ։ Նրանք իրենց հետևորդներին հրահանգում են բաներ, որոնք անընդունելի են։ Յուրաքանչյուր Մարգարեն և Առաքյալը ուղարկվել է հատուկ իր մարդկանց, մինչ Մուհամեդը ուղարկվել է ամբողջ մարդկությանը ։

## ԿԱՍԿԱԾ ԻՍԼԱՄԻՆ և ՊԱՏԱՍԽԱՆ.

Մի ասեք. « Եթե իսլամը ճիշտ է, կամ այնքան հոյակապ է, որքան դուք ասում եք, մուսուլմանները կգործեն ըստ իրենց հավատքի ։» Դուք կարող եք այս ասել սխալ փորձի հիման վրա , որը դուք ձեռք եք բերել մուսուլմանից, բայց արդյո՞ք դուք անցել եք այդ ամեն մուսուլմանի հետ , որպեսզի կարողանաք տալ մուսուլման հասարակության կարծրատիպը ։ Շատ մուսուլմաններ գործում են ըստ Իսլամի ինչպես պետք է, մինչ մյուսները ոչ։ Նրանք , ովքեր չեն գործել ըստ իսլամի, ինչպես հարկն է, կընդունեն ըստ Ալլահի հատուցման ։

Երթևեկության լույսերը դրված են, այնպես, որ մարդիկ վարեն ըստ կանոնի ։ Եթե մարդ անցնում է կարմիր լույսով, նա դնում է իրեն և ուրիշներին վտանգի մեջ ։ Տեսնելով այդ, արդյո՞ք մենք կարող ենք ասել, որ այդ քաղաքի բոլոր մարդիկ օրինախախտ են։ Նույնիսկ, եթե մարդ մի քանի անգամ արել է այդ, նրան կբռնեն և կպատժեն արարքի համար ։ Այժմ դիտելով մուսուլմաններին, դուք կարող եք տեսնել ոմանց , ովքեր չեն գործում ըստ Իսլամի, սակայն, այդ չի նշանակում , որ բոլոր մուսուլմանները վատն են ։ Դատեք Իսլամը այնի համար , ինչ նա է, այլ ոչ թե մուսուլմանների արարքներով ։

Ես գիտեմ, իսլամ ընդունելու որոշումը դժվար է և պահանջում է քաջություն ։ Ես խնդրում եմ Ալլահին , Ամենաբարձրյալին , առաջնորդի ձեզ առ ճշմարտություն և բացի ձեր սրտերը , ստանալու կատարյալ երջանկություն ։ Ամեն

## ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

1. Դինար և Դիրհամ . Գումարի տեսակ

2. Հադիթ. Մարգարեական սովորույթ

3. Իթիկաֆ. Ընդհանուր առմամբ, այն վերաբերվում է մեկուսացմանը: Իթիկաֆը երկրպագման գործողություն է, որում անհատը մեկուսացնում է իրեն մզկիթում և երկրպագում է Ալլահին:

4. Իման. Հավատք

5. Ջեննա. Այն Երկնային Բնակավայր է, կամ Երկնային Այգիներ են, որը Ալլահը պարգևել է առաքինի ստրուկներին, հետագա կյանքում:

6. Շեյթան . Սատանա

7. Շարիաթ. Իսլամական օրենսդրական Օրենք.

8. Սուննա. Ունի ավելի քան մեկ իմաստ.Այն կարող է վերաբերվել

Ա. Մարգարեական սովորույթին

Բ. Կանոններ, այսինքն, կարող է նշանակել, որ արարքը հաստատվել է Սուննայով.

الحمد لله رب العالمين
وصل اللهم على أشرف المرسلين وعلى آله وصحبه
أجمعين

Փառք Ալլահին՝ աշխարհների Աստծուն:
Ես խնդրում եմ Նրանից
Շնորհակալություն հայտնել և պահպանել
Ամեն չարիքից մեր մարգարե Մուհամմեդին,
Նրա ընտանիքին, հետևորդներին և բոլոր նրանց,
Ովքեր ճշմարտության ճանապարհին հետևեցին
Նրան:

www.thekeytoislam.com

www.islamland.com

www.islamhouse.com

www.sultan.org

www.islamic–invitation.com